

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Ա. Մ. Գարագաշեան «ԲՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ քանասիրական տեղեկութեանց.

Մասն Ա.—Նախնական ժամանակ.

Մասն Բ.—Պատմական ժամանակ—Արշակունիք...

Թիֆլիս. 1895.

Գիտութեան նպատակը չէ յազուրդ տալ հետաքրքրութեան կամ շատ կամ սակաւ հանձարեղ ենթադրութեանց շնորհիւ ազատ ասպարէզ, այլ նորա նպատակն է ընդարձակել ճշմարտութեան իշխանութիւնը եւ մոլորութեանը՝ անձուկ սահմանի մէջ շրջափակել:

(Curtius).

Պ ա ռ ու ն ա կ ու թ իւ ն

Առաջին տպագրութիւն եւ նախկին տպաւորութիւն:

Ա. Ստուգաբանութիւնն ընդհանրապէս.—հայ լեզու եւ հայ բանասէրք. բառերու նշանակութիւն ու դերը լեզուի մէջ. ստուգաբանութիւն իբրեւ գիտութիւն եւ իւր պահանջը: Գարագաշի տեսութիւնը ստուգաբանութեան նկատմամբ:

Բ. Ստուգաբանութիւնը Գարագաշի քննական պատմութեան մէջ.

1. Արշակունի, Պարթև, Պահլավ, Գարագաշի տուած մեկնութիւնը—հերքումն՝ ա) պատմութեամբ՝ ըստ Գուդալի-

դի, բ) լեզուաքննութեամբ (քերականօրէն և ստուգարանօրէն). եզրակացութիւն:

—Միւս բառերու մեկնութիւնը վերոյիշեալ ծրագրով—

2. Վեհ, Վահագն, Բագ, Բագարատ...

3. Աժդահակ, Զոհակ, Հրուդին...

4. Խոռ, Մանաւազ, Բազ...

5. Կերտ, շէն, աւան, ապատ.

6. Սեպուհ, սպայ, սպահ...

Գ. Հայք և Աւեստայի ժողովուրդ.—Ձանդ՝ ըստ Գարագաշի, Զենդ և Աւեստա բառերու բուն նշանակութիւնը, Արարատի նախկին բնակիչներ ըստ Գարագաշի: Աւեստայի ժողովրդի բուն հայրենիքը: Արմենիոյ տեղը Գարեհի հարկատու նահանգներու թուի մէջ ըստ բեռադրերի:

Դ. Ընդհանուր լեզուաբանական խնդիրներ.—լեզուի ծագումն ըստ Գարագաշի. հերքումն՝ ըստ Մաքս Միլլէրի և այլոց: Ցեղերու բաժանումն ըստ լեզուի. հերքումն ըստ նոյն գիտնականի:

Վերջին խօսք:

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԿԻՆ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆ.

Ճիշտ 15 տարի առաջ Կ. Պոլսոյ հայ մամուլն և Կաւկասի հայ թերթերու թղթակիցներն հայ բանասէրներուն կը հաղորդէին օրուայ գրական մեծագոյն նորութիւնը, Հայոց քննական պատմութիւն մի լոյս կը տեսնէր արդէն ծանօթ մի հմուտ գրչէ, ուստի մեծ էր հետաքրքրութիւնը և իւրաքանչիւր ոք կ'աշխատէր կարգալ ու այնուհետև վէճի ու քննութեան նիւթ կը դառնար ընկերական շրջաններու մէջ. և, կարծէք, կընդհանրապէս այս համոզումը, թէ Գարագաշեան էֆէնտի իւր պատմութեան Ա. մասով՝ ջրելով Խորենացու և մեր այլ մատենագիրներու աւանդած հայոց պատմութիւնը՝ կուտայ հայ բանասէրներուն լեզուաբանութեան և բանասիրութեան վերայ հիմնուած և արտաքին աղբիւրներէ հանուած մի նոր պատմութիւն: Սոյն տպաւորութեան տակ՝ նոյն ժամանակ զայն կար-

դաց և սողերուս գրողն, որ աշակերտական նստարանի վերայ դամուսած՝ վիպասանութեան ընթերցման յատուկ հետաքրքրութեամբ կ'անցնէր ծայրէ ի ծայր: Ո՛րքան մեծ էր հրապոյրն և ինչ մեծ յափշտակութիւն, երբ Չաքընեանի հայոց պատմութեանն՝ յետոյ՝ կըյաջողէր կարգաւ Գարազաշի «Քննական պատմութիւնը» հոգ չէ, թէ շատ բան կըմնար մութն ու անհասկանալի, զի բաւական էր, որ մէն մի էջ նորութիւն մի պարունակել կը թուէր...:

Կ'անցնէր 15 տարի... Քննական պատմութեան շարունակութիւն կը դատապարտուէր մնալ լուսազուրկ. մինչ Ա. մասն ևս, կարծէք կըմոռացուէր բանասէրներէ... Վերջապէս «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութիւն», որ ծայրայեղ նորութեանց հետ զուգել գիտէ և աչքէ հեռուն ու մտքէ մոռացուածն՝ կըձեռնարկէ հրատարակել այս կիսակենդան գործն ամբողջովին:

Այս անգամ կրկին կարդացի արդէն լոյս տեսած Ա. և Բ. մասերն, սակայն այլ հայեցակէտով ու պատրաստութեամբ, Համեմատական լեզուաքննութեան լապտերն առած՝ անցնել փորձեցի այն շաւիղ ու բաւիղներէ, ընդ որ կ'առաջնորդէ Գարազաշ և իւր ընթերցողները. և հետեւեալ սողերն պիտի ներկայեն ընթերցողին, թէ ո՛ւր, ի՞նչ կայ. և թէ Գարազաշ ինչպէս է զայն ճանաչեր, որ նոյնպէս յանուն «համեմատեալ բանասիրութեան» կըստուգաբանէ ու կը վճռէ:

Սակայն պիտի կանխեմ ասել, թէ ընդհանուր բանադատական մի գրել՝ չէ նպատակս, որու համար պէտք եղած ժամանակը չունիմ. այլ աստէն պիտի քննեմ միայն և միմիայն այն լեզուաբանական կէտերն, որոնց վերայ հիմներ է Գարազաշ իւր «Քննական Պատմութիւն» և մասամբ ևս այն բանասիրական տեսութիւնը, որոնք մոծ աղերս ունին առաջնի հետ: Գարազաշ իւր «Քննական Պատմութիւնը» գրած լինելով՝ ըստ նորազոյն... լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց իրաւունք ունինք այս նորագոյն տեղեկութիւնք առանձին քննութեան ենթարկել:

Ա. ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԻՐԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ.

«Սուտին ճակատագիրն այս է, որ կանուխ կամ անազան, թէպէտ ոչ ամենեցուն՝ կիրթ և կորովի մտաց անշուշտ կրայտնուի, և ընդհանուր խայտառակութիւն այնուհետև հարկ իմն է»։ (Գարագաշ. Քնն. Պատմ. յառաջաբան էջ Ը.)

Միշտ գովելի եռանդ ու ձգտումն կը նկատուի հայ բանասէրներու շրջանի մէջ՝ հին և արդի հայերէնի ուսումնասիրութեան նկատմամբ. ոմանք՝ թէպէտ դժբախտաբար թուով փակուա՝ կ'ընտրեն մեր գաւառական բարբառներէն ընտիր բառեր ու դարձուածներ և նուրբ ճաշակով մի յղկելէ յետոյ՝ արդի գրական լեզուի սեպհականութիւն կը դարձնեն. այլք հետամուտ մեր նախնեաց լեզուի ուսումնասիրութեան, հետզհետէ յերևան կը բերեն մասն ու անդ մոռացուած բառեր և նոր շունչ տալով կը նուիրեն արդի հայերէնի գանձարանին. այսպէս մի կողմէն տակաւ կը ճոխանայ ու կը կատարելագործուի մեր արդի գրական լեզուն, միւս կողմէն շատ մթին կէտեր կը լուսաբանուին մեր դասընտիր երկերու մէջ։ Սակայն ոմանք՝ և այն առաւել հմուտներ՝ իրենց հետազոտութեան մէջ կը փորձեն առաւել հեռու գնալ. լեզուն իւր գործնական նպատակէն զատ՝ այլ նպատակի համար եւ կը ձգտեն կերակրել։ Եւ արդեամբ՝ ինչ չի կարելի հետազոտել և ուսումնասիրել ազգի մի կեանքին վերաբերեալ՝ նորա լեզուի բանիբուն ուսումնասիրութեամբ—նորա հնութիւնը, մասամբ ցեղակցութիւն, սահմանակից ազգերու հետ ունեցած փոխադարձ յարաբերութեան և կրած ազդեցութեան չափն ու տեսակը, ազգի քաղաքակրթութեան տարրերու երբ և ուստի զալն, կրօնական հայեացքներու զարգացումն և վերջապէս ազգի պատմութեան շատ հնագոյն կէտերու լուսաբանումն և այլն և այլն։ Այս նկատմամբ ազգի մի լեզուն նորա դարաւոր գանձարանն է, մտաւոր արտադրութիւններու թանգարան է. ուր հազարաւոր տարիներու ընթացքին այլազան ճոխ նիւթեր են մթերուած. անտի մէն մի բանահիւս կ'ընտրէ իւր նպատակի համար նիւթեր և իւր պատրաստութեան չափով կը մշակէ զայն։ Այս տեսակ հետազոտու-

թեանց համար առաջնակարգ նշանակութիւն ունին լեզուի բառերն, որոնք՝ թէպէտ մասնաւոր իմաստով առած՝ մի մեծ ամբողջութեան մասերն են, սակայն այլ հայեցակէտով և անկախ նիւթեր են։ Նոցանէ իւրաքանչիւրն առանձին դեր մի կրկատարէ և իւր ինքնուրոյն կոչումն ունի. նոցանէ իւրաքանչիւրն ենթակայ է նաև լեզուի կենաց փոփոխումներուն, բառն ընդունակ է այլասեռել, կարող է նոր կազմուիլ, ինչպէս և մեռնել իւր ստանձնած կոչման կամ կրած նշարագրի համեմատ։ Ուստի՝ լեզուի ուսումնասիրութեան ու խուզարկութեան սկիզբըն ու հիմունքն է բառերու պատմութիւն այսինքն ստուգաբանութիւնը։ Այս ռահանորդ սկզբունքներն և մեծ ու նշանակալից ճշմարտութիւններն, որոնցով զինած գիտունը ձեռնամուկ կը լինի նորանոր գիտերու և գիտութիւն միշտ առաջ մղելու և որոնցմէ կառուցուած է լեզուաբանութեան ողջ շէնքը՝ հաստատուած են առհասարակ բառերու ճիշդագրութեան ուսումնասիրութեան վերայ։ Բառերը լեզուաբանութեան վկաներն են, զորս կը հարցաքննէ ստուգաբանութիւնն՝ ստանալու նոցացուցումներն թէ իրենց անձի, թէ այն լեզուի, որուն կը պատկանին և թէ ընդհանրապէս լեզուի վերայ ¹⁾։ Ի հարկէ այս նպատակով էր, որ 1894-ին Կ. Պօլիս լոյս տեսաւ Տէր Յ. Հիւնքտարպէյէնտեանի «Ստուգաբանական բառարան հայ լեզուի» իսկ այս տարի՝ Գարագաշի «Քննական պատմութիւն հայոց» երկը՝ ըստ նորագոյն լեզուաբանական և բանասիրական տեղեկութեանց, որով Գարագաշ մեր բանասէրներու մէջ առաջին անգամ կրփորձէ այնքան ընդարձակ կերպով օգտուիլ լեզուէն պատմութեան համար՝ լուսաբանել աշխատելով պատմական շատ մթին կէտեր և լուծել պատմութեան կարևոր խնդիրներ (ինչպէս օրինակ Արշակունեաց պատմութիւն... և այս ստուգաբանութեան միջոցով)։

Անտարակոյս ոչ ոք կարող է ուրանալ ստուգաբանութեան կարևորութիւնը՝ այս և նման խնդիրներու համար. սակայն և ամեն ոք պիտի փափագի վերահասու լինել, թէ Գարագաշ ինչ չափով և ինչպէս է օգտուել այս կարևոր գիտութեանէն իւր գործի համար. ուստի անհրաժեշտ է քննութեան ենթարկել լեզուաբանական այն սկզբունքներն, որոնցով առաջնոր-

1) W. Whitney, Die Sprachwissenschaft. 1874. ԳԼ. Բ.

դուած է իւր ստուգաբանութեան ընթացքին: Հիմնական սկզբունքներու այս քննութիւն շատ աւելի կարևոր է, քան որչափ կընկատուի առաջին ակնարկով, զի աստի է կախուած ստուգաբանութեան իբր ստոյգ գիտութեան գնահատումն և հետևաբար այն պատմական եզրակացութեան արժէքն ու ճշմարտութիւնը: Եթէ սխալ են իւր լեզուաբանական սկզբունքներն, վրէպած է անշուշտ իւր նպատակէն և ստուգաբանութիւն: Եթէ ուղիղ չէ իւր ստուգաբանութիւնն, ուրեմն ոչ երբէք ճշմարիտ անտի դուրս բերած պատմական հետևութիւնը: Յաջորդ տողերու նպատակն է պարզել այս կէտը:

Թէ ինչ էր ստուգաբանութիւն կամ առաւել ճիշտն ասած՝ ինչպէս կըհասկացուէր մի դար և աւելի առաջ և ինչպէս ներկայս՝ որոշակի կը պարզուի հետեւեալ տողերու մէջ, զոր քաղուածօրէն մէջ կը բերենք ըստ Մաքս Միլլերի ¹⁾—Ստուգաբանութիւնն ևս գիտութիւն մէ, և այն մեր դարին յատուկ գիտութիւն: Մենք կարող ենք մի գաղափար կազմել հին ժամանակի ստուգաբանական դատանշի (kriterium) վերաբերմամբ, երբ կարդանք Գիշարդի յաջորդ խօսքերը.—իսկ ինչ կըվերաբերի բառերու ածանցման՝ տառեր աւելացնելով, յապաւելով, փոխելով և տեղափոխելով հաւաստի է, թէ այս կարելի է և պէտք է այսպէս վարուել, եթէ կուզենք ճիշտ ստուգաբանութիւն գտնել: Այլ և բնաւ դժուար չէ հաւատալ, եթէ մտածենք, թէ հրէայք կըզրեն աջէն ձախ, իսկ Յոյներ և այլ ազգեր, որոնց լեզուն երբայերէնէ կը ծագի (այսպէս գերմ. Յարգմ. մէջ), կըզրեն ձախէն աջ.—Quant à la dérivation des mots par addition, subtraction, transposition et inversion des lettres, il est certain que cela ce peut et doit ainsi faire, si on veut trouver les etymologies. Ce que n'est point difficile à croire, si nous considérons que les Hebreux écrivent de la droite à la senestre, et les Grecs et autres de la senestre à la droite.—(Guichard, Harmonie Etymologique, 1606, Paris): Ուրեմն՝ այսպէս կ'եզրակացնէ Գիշարդ, ամենևին վնաս չունի, երբ ըստ քմաց յեղաշրջուին և փոփոխուին գրերը: Յորչափ ստուգաբանութիւն կըգործէր այսպիսի սկզբունքներով,

¹⁾ Max Müller, Die Wissenschaft der Sprache. 1892. III. cap. VI.

բնաւ իրաւունք չունէր գիտութիւն կոչուելու յաւակնութիւն ունենալու՝ Նա լոկ խաղալիկ մ'էր, որով կարելի էր արտայայտել շատ կամ սակաւ հմտութիւն կամ պատմութիւն. սակայն իւր ազնիւ կոչման՝ այն է՝ գիտութիւն ճշմարտութեան, անարժան էր:

ՃԻՃՏ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՆԱԻ ԳՈՐԾ 2ՈՒՆԻ ՀՆՁՄԱՆ ՀԵՏ:—Միայն մեր դարու մէջ ստուգաբանութիւն գրաւեց ի շարս գիտութեանց իւր տեղը: Ստուգաբանութիւն արդեամբ գիտութիւն մ'է, որու համար նմանութիւն կամ նոյնութիւն՝ հնչման լինի թէ նշանակութեան՝ բոլորովին երկրորդական է: Գիտենք նոյն ծագումն ունեցող բառեր, որոնք և ո՛չ մի տառ անգամ նման ունին, իսկ նշանակութեամբ ևս նոյնքան տարբեր են՝ որչափ սպիտակն ու սևը: Լոկ ենթադրութիւնը, որքան եւ հասնականութեան արժանի լինին, բայց ի բաց պիտի մերժուին գիտական ստուգաբանութեան սահմանէն: Ստուգաբանութիւն այլ ևս չի ձգտեր այժմ միայն ուսուցանել, թէ մի բառ կը ծագի մի ուրիշէն. այլ կը փափագի քայլ առ քայլ հաստատել, թէ մի բառ ըստ ուղիղ կանոնի եւ անհրաժեշտաբար պէտք է փոխուի մի ուրիշի: Ինչպէս երկրաչափութեան մէջ սակաւ արժէք ունի գիտնալը, թէ մի ուղղանկիւն եռանկեան երկու էջերու քառակուսու գումարն հաւասար է ներքնաձգի քառակուսուն, այսպէս և դոյզն արժէք ունի ստուգաբանութեան մէջ գիտնալը, թէ հայերէն կին նոյն է սանսկրիտ զնա (gna) կամ ռուսերէն ժենա (zena) բառերու հետ: Երկրաչափութիւն կ'ուզէ ուսուցանել այն եղանակն, որով կարելի է հաստատել այն՝ ինչ որ առաջին հայեացքով անհաւատալի կը թուի. նոյնը կը ցանկայ և ստուգաբանութիւնը: Բառի մ'ածացումն (ծագումն), եթէ մինչև իսկ ուղիղ լինի, ո՛չ մի իրական արժէք ունի, երբ չի կարելի հաստատել—մի դէպք՝ որ շատ յաճախ կը պատահի՝ մանաւանդ հին լեզուներու մէջ, երբ ստիպուած ենք շատ անգամ մտացածին ստուգաբանութիւն մերժելով միայն գոհանալ, թէպէտ առանց լաւագոյն մի տեղը դնել կարողանալու: Անտարակոյս դեռ շատ քանք պէտք է գործ դնել, մինչև կարողանանք ազատուել այս ըմբռնումէն, որ է՝ Ստուգաբանութիւն պէտք է հիմնած լինի հնչման և նշանակութեան հաւասարութեան վերայ. և այս նախադաշարման ազդեցութիւնն իրավաւ բառնալու համար՝ պէտք է քննել այս նիւթն իւր բոլոր մանրամասնութեամբ: (Հեղինակն

ամբողջ գլուխ մի նուիրած է այսնիւթի ուսումնասիրութեան): Եթէ բառերն իրենց սկզբնական հնչումն և իրենց նախնական նշանակութիւնը կարողանային պահել, այն ժամանակ լեզուն ընդհանրապէս՝ պատմութիւն բնաւ չէր ունենար: Լեզուներու խառնակումն ո՛չ երբէք տեղի պիտի ունենար և մեր լեզուն այսօր մեր առաջին նախահարց լեզուն պիտի լինէր: Սակայն լեզուի էութեան մէջն է աճելու և փոփոխուելու ընդունակութիւնը, և եթէ ձեռնհաս չենք գտնել այս փոփոխման կանոններն և այս աճման օրէնքներն, այն ժամանակ մեզ բռնաւ չպիտի յաջողի մարդկային բարբառի, որ անվերջ այլազանութեամբ բաժանուած է գիւղերու, քաղաքներու, երկրներու և աշխարհների մասերու վերայ. յետախաղաց նորա պէսպէս հանգամանքներուն հետեիլ մինչև նորա աղբիւրն ու գտնել սկզբնական նշանակութիւնը:

Արդ՝ եթէ ուղիղ է վերոյիշեալ առաջադրութիւնը, թէ ճշգրիտ ստուգաբանութիւն հնչման հետ գործ չունի, ուրեմն ստուգաբանութեան (ածանցման) ճիշտ լինելն հաստատուու համար լինչ միջոց ունինք և լինչ եղանակի պիտի հետեիլ: Մեր պատասխանն է. պէտք է գտնենք օրէնքներ, որոնք կը կանոնադրեն զնստփոխութիւն: Յորչափ հակառակը չէ հաստատուած՝ մենք կը հաւատանք, թէ լեզուի զարգացման մէջ՝ ինչպէս և բնութեան օ և է արտադրութեան մէջ՝ կը տիրէ օրէնք և կարգ, և թէ մարդկային լեզուի պատմութեան մէջ դիտուած փոփոխութիւններ չեն կարող պատահման արդիւնք լինել, այլ թէ նոքա ընդհանուր և որոշեալ օրէնքի հետ են կապուած:

ՀՆՁԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԻՄՔՆ Է ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵ-ՋՈՒՄՔՆՆՈՒԹԵԱՆ: Այժմ արդէն ամէն մարդ կը խոստովանի, թէ հնչաբանութիւն (Lautlehre) էական է համեմատական լեզուաբանութեան մի առողջ ուսման համար:

Ցայս վայր Մաքս Միւլլեր:

Անվիճելի խնդիր է այլ ևս, թէ ստուգաբանութիւն պիտի կատարուի հնչաբանական որոշեալ օրէնքներու հիման վերայ. իւրաքանչիւր բառի մէջն մի հնչումը քննութեան պիտի ենթարկուի. պիտի հաստատուի սոյն օրէնքներով կամ պիտի հերքուի: Քմահաճոյքն ու սրամտութիւնը կը դադարեն այս շրջանի մէջ, և կ'իշխէ գիտութիւն իւր բոլոր խստութեամբ:

Ձայս այսպէս հաստատուէն յետոյ՝ տեսնոյնք, թէ Գարա-

դա՛ռ ի՞նչպէս կ'ըմբռնէ ստուգաբանութիւն և ի՞նչ սկզբունք ու եղանակի կը հետեւի: Ամեն տարակոյս փարատելու և նորանոր առարկութեանց տեղի չտալու համար՝ մէջ կըբերենք նոյն իսկ Գարագաշի խօսքերն այս մասին: Վերոյիշեալ Հ. Հիւնքեարալ. ստուգ. բառգիրքն Գարագաշի քննական վկայագրովն է արժանացած «Սահակ-Մեսրոպեան մրցանակ»-ին. սոյն վկայագրի և նմա յաջորդող յառաջաբանի մէջ՝ հետեւեալն կըգրէ Գարագաշ. «Ստուգաբանութեան, Յունարէն բանիւ էղիմորիա, նպատակն է ցուցնել բառերու ծագումը... Արդարեւ այս բառք շատ անգամ հնչման կամ զրերու տարբերութեամբ, երբեմն եւս յաւեմամբ կամ նուազմամբ և տեղափոխութեամբ կը հեռանան բունին հետ նմանութենէ, ուստի և կրնան թուիլ բունի և բոլորովին անյարիբ, սակայն գիտել պարտ է զի, ըստ մտաց հեղինակին, և է արդարեւ զարմանալի եւ ճիշտ, հայերէնի հարստութեան և զանազանութեան գլխաւոր աղբիւրն է զերբու զանազանութիւնն, այնպէս որ միեւնոյն բունը կամ արմատը կը բազմանայ զրի յաւելուածով կամ փոփոխմամբ, արմատին նշանակութեան աւելի կամ նուազ մօտ, և կամ հակառակ իսկ նշանակութիւն ունեցող գաղափար յայտնելու: Այս կէտը որ հայերէնի ծննդականութեան կամ բեղմնաւորութեան գլխաւոր պատճառն է, գիտ է մեր հեղինակին»... (Յառաջաբ. էջ. Է.): «Նա փորձով կը վկայեմ թէ շատ լոյս առած եմ Հիւնքեարալէյեանտեանի բառարանէն: Այն բառարանէն գիտեմ, թէ մեր հայերէն պահար, է չորքոտանի, Պրս. բայ, ոտն և չար, չորս բառերէն, և թէ՛ նոյն բառն է ուրիշ ձևով մեր պախլէն, այսինքն արջառ. կամ ոչխար *)...» (Անդ էջ Ե.):

*) Ծանօթ. Կարգալով այս տողերը մարդ կատարելապէս կը զարմանայ, թէ հեղինակի նման մի հայագէտ ի՞նչպէս կարող էր նախ՝ ոչ միայն ընդունել, այլ իբրեւ մեծ լուսաւորումն հռչակել, թէ հայ պահար է պրսկ. բա-չար. ոչ ապաքէն հայ բարդութեան ոգուն միանգամայն հակառակ է այս, քանի որ Յուսկանը բարդութեանց մէջ միշտ նախադաս է (օրինակ բերելու պէտք կայ). ուրեմն պիտի լինէր չար-բա-չորքոտանի. և ոչ թէ բա-չար-ոտ-չորք-անի: Թուականի նախադաս լինելը բարդութեանց մէջ ընդհանուր է նաև նոր պարսկ. պահլ. զենդ. սնկրտի... մէջ du-kar երկու՝ դանակ-մկրատ, չար-մրխ, չար-փա...

Նւ երկրորդ նոյնացնել պախլէ բառի հետ. վերջինս ամենայն հաւանականութեամբ է սեմական փոխառեալ բառ bak-

Այս տողերը կարգալէն յետոյ՝ հազիւ թէ պէտք լինի յաւելուլ, թէ Գարագաշ հաւատարիմ հետևող մէջ Գիշարդի, զոր վերագոյն յիշեցինք և որու „Harmonie Etymologique հրատարակուած է 1606-ին: Արդ յայտնի է, թէ ինչպիսի ստուգաբանութեան հետ գործ ունինք „Քննական պատմութեան“ մէջ. մանաւանդ զի հեղինակն, ինչպէս ինքն կրկկայէ, այնքան շատ լոյս է առած Հիւնքեարպէյէնտեանի բառարանէն: Մի գիրք, որու մէջ միայն չարաչար ծաղրուած է ստուգաբանութիւն և խայտառակուած ամբողջ լեզուաքննութիւն:

Բ. ՍՏՈՒԳԱՅԱՆՈՒԹԻՒՆԸ «ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՄԷՋ.

Դիմելով այժմ „Քննական պատմութեան“ մէջ աստ ուսանդ կատարուած ստուգաբանութեան՝ մենք պիտի ընտրենք ու մանրամասն քննութեան ենթարկենք առանձնապէս այն բառերը կամ բառերու խումբն, այլ և այն ընդհանուր լեզուաբանական ու բանասիրական կէտերն, որոնց հետ կապած է Գարագաշ. հ. պատմութեան հ և է դէպք կամ վիճակի խնդիր:

1. ԱՐՇԱԿՈՒՆԻ, ՊԱՐԹԵԻ, ՊԱՀԼԱԻ.

Նախ ի մի ժողովենք այն բոլոր հատուածներն, որոնք կպարունակեն Գարագաշ. եզրակացութիւններն այս բառերու նըկատմամբ. „Արշակունի բառին նշանակութիւնը գտնելու համար պէտք չունինք Խորենացւոյն և այլոց վկայութեան: Արիական լեզուաց ուսումը կամ լաւ ևս ասել՝ համեմատեալ բանասիրութիւնը (philologie comparée), որ մեր դարուն յատուկ է՝ բաւական է ճշտիւ տալ մեզ արշակունի բառին նշանակութիւնը: Արշակունի կը նշանակէ „արքունի, թագաւորական“, հայերէն Արշակ անունէն, որ զանգիկ կամ (?) հին պարսկերէն

ra, bakre (—բաքրա, բաքրէ) նշանակութեամբ բոլորովին նոյն. միտի դժուարութիւնն յառաջ բերողն է սեմական b—բ տառը, զոր նախնիք միշտ բ-ով են տառադարձեր և ոչ պ, ինչպէս ունի պախրէ. այս կէտն առաւել կշիռ կըստանար, երբ նկատենք նաև, թէ Յ. Մանդակունին արդէն կը կիրարկէ պախրէ. ուրեմն պ-ով: Յամենայն դէպս դժուար կարելի է պախրէ՞ն բաժանել բաքրէ բառէն: (Այս ըստ Հիւրշմանի):

լեզուին Քշերշէ (Քսերքսէս) բառին կրճատեալը կամ աղաւաղեալն է, և կը նշանակէ արքայ, ինչպէս նաև Քշերշէն սանգըրիդ լեզուին Քշարան է: Դիտողութեան արժանի է, որ Արշակ անունը թագաւորաց միայն կը տրուէր, ...: Հայք որոց պաշտօնական լեզուն, գէթ առ Պարսկօք, պարսկերէն էր՝ արիական բառով արշակունի կոչեցին հին Արարատեան թագաւորական ցեղը: (Հ. Ա. 88):

«Ընդհանրապէս կը կարծուի, թէ Արշակունի կը նշանակէ արշակոն, այսինքն սերունդ Արշակայ առաջին թագաւորին Պարթևաց: Բայց զթագաւորս Պարթևաց կամ զցեղ նոցա արշակունի կոչուած ոչ ուրեք գտանեմք, մանաւանդ զի բոլոր թագաւորք Պարթևաց Արշակայ սերունդէն չէին. քանզի թագաւորք Պարթևաց ոչ թէ միշտ որդի ի հօրէ կ'առնուին թագաւորութիւնը, այլ ընտրանաւ: Արշակ կոչուած, որ կը նշանակէ թագաւոր՝ բոլոր Պարթև թագաւորաց բուն անուններուն հետ կից կը դառնուի իբրև պատուանուն, ինչպէս Փարսաոն տիտղոսը՝ Նզիպտացոյց: (Հ. Ա. 81):

«Ամէն ազգ կամ ցեղ երևելի անձէ մը յառաջ եկած ցուցնել, ... հին սովորութիւն էր, ...: Ընդէր Արշակունիին չսերէր Արշակէ մը... Ապաքէն պիտի հաւատայինք, ինչպէս հաւատացին մեր նախնիք, թէ Արշակունիք յԱրշակայ էին՝ եթէ ժամանակակից պատմութիւնը չհերքէր այն տիեզերական աշխարհակալութիւնը, զոր Խորենացին կ'ընծայէ Արշակայ, ուստի և այն մեծ պարգևը՝ որ տուած կը պատմուի հայոց, և եթէ դարձեալ պատմութիւնը և բանասիրութիւնը չգային մեկնել Արշակունի անունը, որ կ'ըլլէ արդարև արշակ, այսինքն արքայ թագաւոր բառէն, բայց ոչ Արշակայ անունէն: (Հ. Ա. 231):

«...ոչ ուրեք ի հին պատմագիրս մեր, ոչ յառաջ քան զԽորենացին և ոչ առ Խորենացոյն, Պարթևք կոչուած են երբէք Արշակունի. Պահլաւ (Քուշանաց) ցեղը միայն կոչուած է Արշակունի: Նթէ հայ Արշակունիք, իբրև սերունդ Արշակայ մեծի Վաղարշակաւ(,) կոչուեցան Արշակունի՝ Պահլաւք, այսինքն Բահլի թագաւորական ցեղն ընդէր կը կոչուի Արշակունի. միթէ այս ցեղն ևս կը սերէր ի մեծէն Արշակայ: (Ա. 235):

«Պահլաւ ճիւղն քան զՊարթևականն յարգի էր առ Պարսիկա, քանզի Պահլաւք աւելի մաքուր պահած էին հին արիական կրօնքը և սովորութիւնները քան զՊարթևա, որ իբրև կա-

ըի յունասէրք՝ աստելի էին Արեաց՝ (Հ. Ա. 225):

Խորենացին միևնոյն ցեղ կամ ճիւղ կը համարի Պարթևն ու Պահլավը... (Ա. 224):

Հիմնադիր Պարթևական պետութեան էր Արշակ Ա, առանձին անուամբ՝ Դարա (Դարեհ կամ Ջարեհ), ի ցեղէն Դարեհի Կողոմանոսի վերջին թագաւորին Պարսից Աքեմենեանց, ինչպէս կը վկայեն գրեթէ միաբան արեւելեան պատմիչք... և այս պատճառաւ կը կոչեն զցեղն Աշկանեան, այն է թագաւորական... (Հ. Բ. 88):

Հրահատ այնչափ զօրացաւ ընդդէմ Սելևկեանց... մինչև մերձ էր մտանել յԱսորիս, մինչ յարձակումն Սկիւթաց (Պահլաւ տոհմին, որ վաղուց կը տիրէր ի Բակտրա) ստիպեց զՀրահատ դառնալ յետս: (Հ. Բ. 89):

Բարեպաշտադոյն Պահլաւ ցեղն, որ Արտաւանաւ Գ. առած էր Պարթևական թագաւորութիւնը՝ չեղաւ բաւական զոհացնել արիական ցեղերուն մոլեռանդութիւնը՝ (Հ. Բ. 96):

Այս հատուածներու մէջ արժարժուած հարցերն առաւել պարզ տեսնելու համար, վերածենք հետեւեալ կարճ բանաձևերու:

ա) Արշակունի կընչանակէ արքունի, թագաւորական, հայերէն Արշակ անունէն, որ Քչէրքչէ բառին աղաւաղումն է.

բ) Հայք արիական բառով արշակունի կոչեցին հին Արարատեան ցեղը.

գ. Ջթագաւորս Պարթևաց կամ զցեղս նոցա արշակունի կոչուած ոչ ուրեք գտանեմք.

դ. Պահլաւ (Բուլանաց, Սկիւթաց) ցեղն միայն կոչուած է Արշակունի.

ե) Հիմնադիր պարթևական պատմութեան էր Դարա՛ի ցեղէն Դարեհի (Կողոմանոս) Աքեմենեանց.

զ) Պահլաւ ցեղն Արտաւանաւ Գ. (14—44 Յ. Ք.) առաւ պարթևական թագաւորութիւնը.

է) Արտաշէս Բ.՝ ըստ Խորենացու, Տրդատ՝ ըստ Տակիտոսի, էր Պահլաւ ցեղէն (Հ. Բ. 2):

Ազգային պատմութենէն յայտնի է Արշակունի հարստութեան մեծ նշանակութիւնը հայոց պատմական կեանքի մէջ. Գարագաշ զայս քաջ ըմբռնելով՝ մեծ տեղ է տուել իւր պատմութեան մէջ, ինչպէս կ'երևի մէջ բերուած հատուածներէն. և կարելի է ասել, թէ իւր բոլոր քննութեան ծանրակէտն է այս, այն առանցքն է, որու շուրջ կը դառնան այնքան բազմաթիւ և բազմազան կէտեր: Գարագաշ, ժամանակակից պատմութիւն ու բանասիրութիւնը ի վկայութիւն կոչելով՝ կը փորձէ տապալել արշակունի դարաւոր շէնքը. նոյնպէս պիտի վարուինք և մեք, այսինքն ներկայ նշանաւոր արեւելագէտներու քննական աշխատութեանց և լեզուաքննութեան միջոցով պիտի քննենք իւր տեսութիւնը: Մանաւանդ զի խնդրի մեծ նշանակութիւնն անհրաժեշտ կը դարձնէ զայս:

ա) նախ՝ պատմական հայեցակէտով.

Պարթևաց պատմութեան համար ընտրելագոյն քննական պատմութիւնը անվիճելի կերպով է Ալֆրէդ ֆոն Գուտշմիդի երկը *). որմէ պիտի առնուինք մեր խնդրին վերաբերեալ կէտերն միայն, յուսալով՝ թէ ուրիշներ պիտի համեմատեն ամբողջ Պարթևաց պատմութիւնը Գարագաշի Արշակունեաց պատմութեան հետ:—

«Արշակունիք. Այս թոյլ թագաւորի (Անտիոքոս Բ. Թէոս, 261—247 Ն. ք. Ք.) օրով տէրութենէն կորզուեցաւ հիւսիս-արևելեան Նրան. մինչ Սելևկեանք զբաղուած էին ուրիշ տեղ, Բակտրիոյ կառավարիչն Դիոդոտոս (Diodotus) զինքն հռչակեց թագաւոր. Սոգգիանան եւ Մարգիանան նոյն իսկ սկզբէն կազմեցին նոր թագաւորութեան մասն, այն ինչ մնացեալ արեւելքն մի միակ՝ նախ հազիւ նկատելի՝ բացառութեամբ՝ դեռ երկար ժամանակ մնաց Սելևկեանց ձեռք: Հիլլենական դաշտութենեւոր համակրութիւնն վայելող՝ մի նոր զօրեղ տէրութեան վերականգնումն բոլորովին մերձաւոր սահմանով, որ կարող էր խիստ սանձահարել և իւր սահմաններն քաջ պաշտպանել, չէր պատշաճեր վաչկատուն ցեղերու գլխաւորաց քրմքին, որոնք՝ տկար կեդրոնական իշխանութեան հեռանալովն՝ ըստ արդի թուրքմէներու այլ ևս անպատիժ չէին կողոպտել

*) A. V. Gutschmid, Geschichte Jrans und seiner Nachbarländer. 1888.

ու հրդեհել իրենց սահմանակից քաղաքակիրթ երկիրն: Ուստի երկրքին եղբարք՝ Արշակ և Տրդատ, որոնց ցեղը Դաճք կոչուած Պառներու մի ստորաբաժանումն էր, թողին իրենց ցարդ Սեսուս (Tetschen—Տեչէն) դետի վերայ՝ Բակտրիոյ սահմանի մէջ գտնուող ճարակավայրերն, և հեռացան դէպի արևմուտք և բնակեցան Սեւեհեանց երկրի մէջ՝ Պարթևաստանին դրացի, Յանուն Անտիոքոսի երկրի շահապետ Փերեկլէսի (Pherekles) կողմէն կատարուած մի անիրաւութիւն, որ կ'ուզէր բռնանալ կրրասեր եղբոր վերայ, դրդեց զերկուսին ապստամբութեան, որոնք սպանին զՓերեկլէս և Պարթևաստան ազատեցին մակեդոնական տիրապետութենէն. որմէ յետոյ Արշակ իբր առաջին Պարթև թագաւոր գահակալեց 250 ն. ք. Ք.: Այսպէս կը պատմէ յետնագոյն պաշտօնական աւանդութիւն, որ արշակունեաց այս նախնագոյն աննշան սկզբնաւորութեան մասին միակ տեղեկատուն է. սակայն սրբագրել պէտք է զայս մի քանի հայեցակէտով: Եթէ աւանդութիւն զԱրշակ, որ ըստ առաջին տեղեկութեան մի ասպատակաց խմբապետ էր և մի անյայտ ծագումն ունէր, բակտրիացի մի կը համարի, որ կը սիրէր Արտաքսերքսէս Բ. որդի Փրիսպիտէսէն (նախ քան գահակալելն Արշակ կոչուած). և եթէ զնա իւր եղբոր և հինգ այլ մարդոց հետ՝ ինչպէս երբեմն եօթն պարսիկ ընդդէմ սուտ Սմերդէսի՝ միասին ուխտել կուտայ, այս տեղեկութիւններն հնարուած են մի այնպիսի ժամանակ, երբ Արշակունիք Աքեմենեանց ժառանգութիւն գրաւած՝ և իրենց պալատի մէջ աւագանիներու կարգը յարգարած էին ըստ պարսիկ օրինակի. Արշակի յիշեալ ընկերներն են ազնուական տոհմերու առաջնակարգ պետերն, որոնց թուին անտարակոյս կը պատկանէին Կարմ, Սուրէն և Ասպահապետ: Սակայն բուն աւանդութիւն բնաւ չի ճանաչեր զԱրշակ, և դեռ 105 թ. ն. ք. Ք., նոյն իսկ Պարթևք ^{248/317} թ. աշունը կը համարէին իրենց հարստութեան սկսման տարին, ըստ որում Արշակ երկամեայ թագաւորութենէն յետոյ 248-ին սպանուած պիտի լինի, և իւր եղբայր Տրդատ, որ զինքն՝ ինչպէս եւ յաջորդ բոլոր թագաւորը՝ ի պատիւ եղբորն Արշակ կոչեց, յաջորդած: Արշակը հնարուած անձնաւորութիւն չէ. եղբայրն Տրդատ իւր դրամներու շրջոնք (revers) երեսի վերայ դրոշմել տուեր է աստուածացեալն Արշակ թղեղն ի ձեռին կումբի վերա դահ բազմած. սակայն Պարթևաստանի թագաւորն ա չի կա-

բող լինելու Զի նոյն դարապուլս եղող Թուին ^{248/247} որ կը նոյնանայ Տրդատի գահակալութեան Թուականի հետ, ըստ հաւաստի տեղեկութեանց Պարթևաստան Սելևկեաններէն չէր կորզուած դեռ ևս։ Այս ըստ երևութին հակասութեան լուծումը մեզ կուտայ Իսիդոր Քարաբցին. ոչ ի Պարթևաստան, այլ անտի դէպի հիւսիս—արևմուտք տարածուող Աստաուէնէ (As-taune) երկրի մէջ կը գտնուէր Ասաակ (Asaak) քաղաքը, ուր Արշակ առաջին անգամ Թագաւոր հռչակուեցաւ. նոյն տեղն իսկ պէտք է պահուէր մշտավառ հուր։ Ուստի աստ՝ Աստաուէնէ որոնելու է Արշակունի հարստութեան նախնազոյն նիստը. և յաղթուած Փերեկլէսն պիտի լինի թէ Պարթևաստանի եպարքոսն և թէ Աստաուէնից շահապետն։

Սելևկոս Բ. (246—226 Ն. Ք. Ք.) և Անտիոքոս Հիրաքս (Hierax) կոչուած՝ պատերազմներու ժամանակ, երբ Անկիւրիոյ մօտ 242 կամ 241 թ. խորտակուեցաւ Սելևկոսի զօրութիւնն ըլլորովին, և ընդհանրապէս ինքն իսկ սպանուած համարուեցաւ, այս լրոյ վերայ Արշակ Տրդատն իբր պետ Պառներու, զոր ստոյգ տեղեկութիւն այս առթիւ կը ներկայէ իբր քաջարի առաջնորդ մի ասպատակաց խմբի, կը յարձակի Պարթևաստանի վերայ, կը յաղթէ ու կը սպանէ մակեդոնական եպարքոսն Անդրազորաս և կը գրաւէ երկիրն։

Այս Պառնեան Դահք Սեր-Դարիա գետի և Արալ լճի միակողմ բնակող Դահերու մի ճիւղն էին, որոնք Քսանդ (Xand) կամ Պառն (Parn) կը կոչուէին. աստի՝ ի հնումն ներքին խռովութեանց պատճառով գաղթեցին դէպի Վրկան (Hyrcan) և Վասպից ծովու սահմանակից անապատներն։ Ոչ միայն աստ, այլ և մեծ մասամբ՝ Պարթևաստանը գրաւելէն յետոյ ևս՝ պահեցին նոքա Սելևթական վաչկատուն ցեղերու ինքնուրունութիւնը։ Պարթևաց լեզուն կը նկարագրուի իբր սելևթական և մեդական լեզուներու միջև գտնուող կամերկուսի խառնուրդ մի բարբառ։ Եւ որովհետև յայնկոյս Սեր-Դարիոյ՝ մինչև հարաւային Ռուսիոյ անապատները տարածուող ընդարձակ տափաստաններու վերայ ի հնումն կը բնակէին երանական ցեղերուն սերտ ազգակից վաչկատուն ցեղեր. և Դահք՝ ինչպէս իրենց և իրենց ցեղի անունը կը հաստատէ, ստուգիւ կը պատկանէին նոցա, ուստի աստ կարող է միայն երկու երանեան բարբառի փոխադարձ ազդեցութեան և խառնուրդի վերայ միայն խօսք լինել։

այն է, արևմտեան Պարսկերէնի՝ Պարթևաց հպատակներու և վերջինէս տարբերուող իրենց Պառնեան իշխողներու բարբառի մասին:...

Կարճ ժամանակ յետոյ Արշակ Տրդատ կը գրաւէ Վրկան: ...Իւր Թագաւորութեան վերջին ժամանակ, որ ի սկզբան իւր դրամներու վերայ միայն Արշակ, յետոյ՝ արքայ Արշակ կը կոչէր զինք, կ'ընդունի մեծ արքայ տիտղոսը. անշուշտ Անտիոքոս մեծի դէպքերէն յետոյ: Նրեպոնեոթնամեայ իշխանութենէն յետոյ կը մեռնի Տրդատ խորին ծերութեան մէջ ^{211/210} թ. իւր ժողովրդէն, համարեա, աստուածացրած: (Էջ 29—):

«171 Ն. ք. Ք. Հրահատին (Phraates) կը յաջորդէր իւր եղբայր Միհրդատ՝ վերին աստիճանի գործունեայ մի մարդ: Սա Նրան կը նուաճէր Պարթև իշխանութեան ներքոյ:» (Էջ 44):

«139 Ն. ք. Ք. Մարաստանի մէջ տուած մի վճռական ճակատամարտով՝ Դեմետրիոս Բ. Նիկատորի դէմ՝ կը խորտակէր ամբողջովին վերջինս զօրութիւնը՝ ինքն իսկ գերի կ'ընկնէր Միհրդատի ձեռք, որով և Նրան կ'ազատուէր մակեդոնեան տիրապետութենէ:» (Էջ 52):

«Միհրդատ մեռաւ 138 թ. կամ սակաւ ինչ յետոյ՝ փառապանծ յաղթանակներով ճոխացած խորին ծերութեան մէջ՝ նոյնպէս յարգուած ինչպէս հիմնադիրն Պարթև պետութեան, սակայն արդեամբ անհամեմատ առաւել նշանաւոր քան զնա. զի սա ստուգիւ այն փոքրիկ իշխանութիւնն այս մեծ զօրութեան հասուց: Նորա պետութեան սահմանը կը տարածուէր հնդկական Կաւկասէն մինչև Նփրատ:» (Էջ. 54):

Ոնոնի օրով տեղի ունեցած խռովութեան առթիւ կը գրէ.

«Արշակունի արական ճիւղն անճետած կամ վտարուած էր. ուստի դժգոհներ կոչեցին զԱրտաւան՝ մօր կողմէն Արշակունի, որ Դահաց մէջ մեծացած և յետոյ իբր արքայ Մարաց (այսինքն Ատրպատական—Atropatene) կարգուած էր. հաւանականաբար 10 թ. յ. Ք. կամ յաջորդ տարուայ մէջ. զի նոյն ժամանակէն երկրքին Թագաւորներու դրամները մնացած են:» (Էջ 118):

«Արտաւանայ յաջորդներէն Վաղարշակ Ա. Թագաւորելով իւր եղբայր Պակորուս (Pacorus) կընշանակէ Ատրպատական Մարաստանի Թագաւոր, իսկ զՏրդատ կըխորհի նշանակել հայոց արքայ. նոքա պէտք է գրաւէին երկրորդ և երրորդ տեղը

արքայից արքայէն յետոյ: (Էջ 129):

«Պարթև իշխան Տրդատ 66 թ. Հռովմ ներոնէն մեծ հանդիսով կը թագադրուի իւր արքայ Հայոց:» (Էջ 58, 133):

Գուտշմիդի այս հատուածներէն գուրս կըրերենք հետեւեալ բանաձևերն ընդդէմ Գարազայի վճիռներուն.

ա) Արշակունիք էին Պառնեան Դահերէն. նոքա Արշակունի կոչուեցան իրենց պէտ՝ յետոյ առաջին թագաւոր Արշակի անուամբ. նա թագաւորեց 250 ն. թ. Ք. Աստաուէնէ երկրի Ասաակ քաղաքի մէջ.

բ) Արշակունեաց Դարեհ Աքեմենեան արքայական ցեղէ համարելն՝ հիմնուած է յետնագոյն ժամանակի անհիմն աւանդութեան մի վերայ:

գ) Տրդատ 241 թ. կըտիրէ պարթևաստանին և այնուհետև կը կոչուին նաև Պարթև:

դ) Տրդատ իսկզբան իւր դրամներու վերայ կը գրէ միայն Արշակ, յետոյ՝ արքայ Արշակ, իսկ վերջը՝ մեծ արքայ Արշակ.

ե. Պարթևք մերձաւոր ազգակից էին Նրանի ցեղերուն և ոչ Սկիւթ և Քուշան ցեղերուն:

զ) Արտաւան Գ. նոյնպէս Արշակունի մէջ մօր կողմէն և Մարաց թագաւոր:

է) Տրդատ, որ երկար խռովութիւններէ յետոյ 66 թ. յ. Ք. կը թագաւորէ հայոց, նոյնպէս Արշակունի-Պարթև էր:

Ըստ ինքեան Գուտշմիդի այս հատուածով կարելի էր Արշակունեաց մասին Գարազայի բոլոր առարկութիւնք ջրած համարել արդեամբ. և այս հերքման մեծագոյն զրաւականն է հեղինակի մեծ և հանրածանօթ հմտութիւնը, զոր նա ունի իւր առարկայի մէջ. Սակայն Գարազայ իւր առարկութեանց հաստատութեան համար կըդիմէ նաև լեզուաբանութեան, ուստի և այս չրջանի մէջ հետեւեք իրեն: Բայց դեռ շարունակելով մընալ պատմական չրջանի մէջ՝ որոշենք Պարթև և Պահլաւ բառերու առ միմեանս ունեցած աղերսն. յետոյ պիտի վերադառնանք Արշակունի, Պարթև և Պահլաւ բառերու զուտ լեզուաբանական մասին:—

Թէ Պահլաւ միևնոյն Պարթև անունն է հնչափոխութեան օրէնքով այս փոփոխութեան ենթարկուած, այս մասին միան-

գամայն աւելորդ կը լինէր եւրոպացի գրագէտներու համար ո՛ր և է նո՛ր առարկութիւն կամ խնդիր արծարծել, զի վաղուց հետէ այս խնդիրն վերջնապէս լուծուած է. բայց որովհետեւ Գարագաշ բնաւ չի յիշեր այն հետազոտութիւններն և Խորենացու յիշածն ևս կը մերժէ, ուստի պէտք է հայ բանասէրներուն ներկայել խնդիրն իւր ամբողջութեամբ. այն է, թէ՛ պատմական և թէ՛ լեզուաբանական հայեցակէտով:

Այս խնդրի մասին լաւագոյն երկն է Ուսհաուզէն (Olshausen) փոքրիկ մի երկը *). ամբողջն հետաքրքիրներու ուշադրութեան յանձնարարելով՝ մենք մէջ կը բերենք միայն հետեւեալը. «Պարթև անուան յիշատակութիւնը վաղուց լուծ կը տեսնենք Սրանի մէջ և այս շատ բնական է, զի թէ՛ նոցա և թէ՛ սասանեան տիրապետութենէն շատ քիչ գրաւոր յիշատակարաններ է մեզ հասեր: Սակայն երբ այսուհետեւ մահմեդական մեծ մասամբ ծննդեամբ Սրանցի մատենագիրներ կըսկսեն բաղմամբիւ երկերու մէջ պատմական նիւթեր արձանագրել, որոնցմէ մի քանի թանկագին յիշատակարանք պահած են, այն ժամանակ արդէն պարթևաց հին անունն պէտք է բոլորովին լուծ լինէր, զի նոքա ո՛չ երբէք զայն կը գործածեն: Այս մատենագիրք՝ երբեմն այնքան հզօր պետութեան համար կը կիրարկեն Աշկանեան կամ Աշգանեստն (Aschkānian կամ Aschganian), այսինքն տոյն հարստութեան հիմնադիր Աշակի սերունդը:... Այսուամենայնիւ խիստ զարմանալի պիտի լինէր՝ եթէ՝ երբեմն այնքան հզօր ազգ Սրանի մէջ բնաջինջ լինէր մինչև իւր անունը, այնպէս՝ որ Արաբներու և նոցա յաջորդներու տիրապետութեան օրով՝ Պարթևաց իշխանութեան մասին ամենադոյզն յիշատակն անգամ ոչնչացած լինէր: Սակայն արդեամբ այսպէս չէ. այլ անունը պահուած է, միայն թէ հնչափոխութեան օրէնքով այլ կերպարան առած և իւր այս նոր զգեստի մէջ՝ անման հնին՝ մնացեր բոլորովին անծանօթ: Աստ իսկականը տեսնել՝ վերապահուած էր նորագոյն ժամանակի խուզարկուողուն: Թէ հին Սրանեան Պարթաւա (Parthava) և նոր պարսկերէն Պահլաւ իրենց նշանակութեամբ Պարթեւներու երկրի եւ ազգի նկատմամբ նոյն են, արդէն ֆրանսացի գիտնական Etienne

*)Y. Olshausen, Parthava und Pahlav, Mäda und Mah. Berlin, 1877.

Quatremère առաջին անգամ ճանաչեց եւ հրատարակեց իւր յիշատակութեան արժանի յօդուածով „Journal des Savans“, 1840, էջ 337 հանդիսի մէջ:... Եւ այս արդէն նորագոյն ակա-
նաւոր այլ գիտուններէ եւս ընդունուած ու հաստատուած է.
այսպէս Oppert (Journ. Asiat. 1851. Série IV. tom. 17. p.
279), Haug (introd. essay zudem Pahlavi—Pazend Qlossary
p. 35“): (էջ 15—16):

Նոյնպէս եւ Nöldeke. (Aufsätze zur pers. Gesch. 1887
էջ 156). „Պահլաւի, Պեհլեւի (Pahlavi, Pehlevi) կը նշանակէ
«պարթեւական»։ Պահլաւ մի կանոնաւոր ձեւափոխումն է հին
Պարթեւի (Parthava)»։

Այս հաստուածներէն եւս կարող ենք դուրս բերել հետե-
ւեալ եզրակացութիւններն, զոր առաջիններու վերայ աւելա-
ցնելով՝ կը ստանանք.

ը) Պարթեւ և Պահլաւ միևնոյն բառերն են՝ հնչափոխու-
թեան օրէնքով կերպափոխուած (մանրամասնութիւն վարը), և
կրնչանակեն միևնոյն ազգն ու երկիրն. թէ Խորենացի և թէ
մեր միւս մատենագիրներն իրաւամբ նոյն կը համարեն զայնս.
և ընդհակառակն այս անուններ կրող երկու տարբեր ցեղ բը-
նաւ գոյութիւն չէ ունեցեր երբ և է Նրանի մէջ։

թ) Նոյն Պարթեւ=Պահլաւներն էին և կը կոչուէին Ար-
շակունի.

ժ) Աշակունի կոչումն Խորենացու հնարածը չէ,—թէ նո-
րամէ առաջ և թէ յետոյ ընդհանուր գործածական պաշտօնա-
կան անունն է Պարթեւ հարստութեան։

բ) Այս դառն եզրակացութիւններով փակելով պատմա-
կան մասն՝ անցնենք լեզուաբանութեան։

Արշակ իբր յատուկ անուն արդէն ծանօթ է Աքեմենեաց
սեպագրերէն՝ «Արշակա նամա» (Arsaka nama և Արշակ անուն *)։
Այլ և ինչպէս տեսանք Դահաց առաջնորդ 250 թ. ն. թ. Բ.
կը կոչուէր նոյնպէս Արշակ։ Զայս փոխառին հայք Արշակ ձևով,
յոյներ՝ Arsakis, լատինք՝ Arsaces, Արաբներն՝ Asak—Աշակ.
վերջին ձևէս կազմուած է պահլաւերէն հայրանունական (pat-

*) Spiegel Altpers Keilinschr. 2 Auf. p. 70.

ronymique) ձևն Աշակ-ան-ան—Asak-ân-ân, այդ ձևս է, զոր կը կիրարկեն Մասուդի (Mas'ûdi II, 133) և Բիրունի (Birûni, p. 112), որ, ինչպէս տեսանք կը նշանակէ սերունդ Արշակայ—Արշակեան, զոր ստիկայն Գարագաշ կը թարգմանէ թագաւորական, (հ. բ. 88): Բայց Asak-ân-ân ձևի քերականական վերլուծումն միայն բաւական է փարատել ամէն տարակոյս, թէ Աշակ-ան-ան=Արշակեան ձեռն. Ահա և քերականական վերլուծումն.

Աշակ—Արշակ—Arsak սորա վերայ աւելացնելով պահլաւերէն (միջին պարսկերէն)—ân (=եան) հայրանունական մասնիկն կը ստանանք Արշակ-ան—Arsak-ân—Արշակ-եան. իսկ վերջին-ân վանդն է նոյնպէս միջին պարսկերէնի յոգնական մասնիկն, ուստի Arsak-ân-ân=Արշակ-եան-ք—Արշակ-ունի-ք: Այս քերականական կազմութիւնն այնքան պարզ է և ընդհանուր պարսկերէնի մէջ, որ միջին և նոր-պարսկերէնի փոքր ինչ տեղեակ եղողի համար նոյն է, ինչ որ հայ դրագէտի համար է—եան և —եան-ք: Ահա մի քանի այլ օրինակներ ևս.

Atr-ormizd Arsak-ân—Ատր-Որմիզդ Արշակեան (=որդի Արշակայ). (Մարգպան հայոց. Ղ. Փրպ. էջ. 215).

Artasir Pâpak-ân—Արտաշիւր Պապակեան (= »).

Xosrov Kavat-an—Խոսրով Կաւատեան (= »).

Արշակունի=պահլաւերէն Asakânân, յունարէն Arsakidai, լատիներ. Arsacidæ*), Խիստ հետաքրքիր է տեսնել, որ յունարէն ձևն ևս բոլորովին նոյն կազմութիւնն ունի՝ ինչ որ պահլաւերէն և հայերէնը, այն է՝ Arsak-i-d-ai այսինքն՝ Arsak+բաղաձայնին յաջորդող-i+d— հայրանունական+ai յոգնական վերջաւորութիւնը:

*) S^kս. Jm. Darmesteter, Etudes Jraniennes I, 83, 226. Nöldeke, Tabari, 112, 457.

Hubschmann, Arm. Lehn. Wort. aus. prs. 27: Ուսուցչապետ Հիւրշմանի այս կարևոր գործը, որուն կ'աշատակցի և տողերս գրողն, արդէն մամուլի տակ է և կը կոչուի. «Պարսիկ փոխառեալ անուններ եւ բառեր հայերէնի մէջ»: Ուրախութեամբ կարող ենք հաղորդել հայ ընթերցողներուն, որ մի կողմէն ևս կը պատրաստուի հայերէն թարգմանութիւնը՝ հայ ընթերցողներու համար անհրաժեշտ յաւելումներով և այս նոյնպէս մեծայարգ ուսուցչապետի խորհրդով:

Սակայն Գարագաշ կրդիմէ ստուգաբանութեան և իւր ամբողջ քննական շէնքը հիմնուած է հետեւեալ բառերու և նոցա միմեանց հետ ունեցած աղերսի վերայ, որ է Արշակ աղաւաղումըն է զանդիկ Քշերքշէ բառին, իսկ Քշերքշէն է սանսկրիտ քշատորան և կը նշանակէ «արքայ» — ուստի տեսնենք, թէ հրքան հաստատուն են այս հիմնաքարերը: Այս բառերու ստուգաբանութիւնն է հետեւեալը.

Արշակ բառի արիական արմատն է rsā (արշա) և կընշանակէ մարդ, այր, այս արմատը կը գտնուի սանսկրիտ rsabhā (=Ռըշաբա) և կը նշանակէ ցուլ, նոյն բառն է զենդերէնի մէջ arsan (=առշան կամ արշան) կը նշանակէ մարդ, այր, առնացի, նայն բառն է յունարէնի մէջ arsen (=արսէն—Արսէն) կը նշանակէ առնական, առնացի. նոյն արմատէն է և բնիկ հայ (այր, առն) բառը, զենդերէնի arsan է հին պարսկ. Արշակ անուն, յորմէ փոխառած են հայք և կը նշանակէ այր, առնացի: (Հմտ. Fick¹), էջ. 303. Brugmann. I, 236. II, 225 Grassmann, 292):

Քշագրան ուղիղն՝ Xsatra (=խշատրա) ունի արմատական ձև՝ արիական շրջանէն ksa (=կշա) ունենալ, տրբել, նշանակութեամբ. նոյն արմատն է սանսկր. ksatra=զենդ Xsatra (=խշատրա)=հին-պարսկ. (սեպագիրք) Xsatra (=խշատրա) և կընշանակէ տէրութիւն, աշխարհ, իշխանութիւն. սոյն բառի նորագոյն ձևերն են. պահլաւերէն՝ satr (=շատր), պաղեհն՝ sahr, sahr-astan, նոր-պարսկ. Sahr=շահր շէհր (քաղաք) նշանակութեամբ: (Հմտ. Grassm. ²) 365. Fick 192. Hr. 177...³):

Քշերքշէ=Քսերքսէս=Խշայարշան=Xsayarsan—, այս անունը բարդուած է վերև ստուգաբանուած երկու բառերէն—Xsayա—տիրող+arsan մարդ, այր. բառացի թարգմանելով՝ Տիրայր: (Brugmann ⁴), II. 327): Ըստ Վինդիշմանի ⁵) Խշայար-

¹) Fick, Vergl. Wörterbuch d. indgrm. Spr. 4 Aufl. 1890.

²) Grassman, Wörterbuch zum Rig-Veda. Leipzig 1873.

³) Horn, Grund. d. neupers. Etymologie. Strasburg 1893.

⁴) Brugmann, Grund. d. Vergl. Grammatik d. indgr. Sprachen. Strassburg, 1889.

⁵) Windischmann, Zoroastrische Studien, Berlin, 1863.

շա կը նշանակէ՝ Տիրայր, մարդակոտոր այլ և տիրող, իշխող հերոս (Եջ 131):

Պարզելով Գարագաշ. յիշած երեք բառերու ստուգաբանութիւն և ցոյց տալով նոցա առ միմեանս ունեցած աղերսը՝ կը տեսնենք, թէ ոչ Արշակն է Քշերքշէ և ոչ վերջինս՝ քշադրան. այլ ընդհակառակն Քսերքսէսն է բարդուած նոյն երկու բառերէ և իւրաքանչիւրն ունի իւր տարբեր և որոշ նշանակութիւնը: Այսպիսով կը տապալի Գարագաշի և վերջին ապաստանարանը, որուն ապականած՝ անքան նորանոր գիտերու հեղինակ կը հանդիսանայ հայոց պատմութեան մէջ:

Վերն արդէն ցոյց տուինք Պարթև և Պահլաւ բառերու նոյն լինելը. աստ կարճ կերպով ցոյց տանք հնչափոխութեան ձևն.— պարսիկ լեզուի հնչափոխութեան օրէնքով հին-պարսկ.— rt—(=րթ) միջին պարսկերէնի մէջ կանոնաւորապէս փոխուած է նախ՝ rh—րհ և ապա՝ hl—հլ. օրկ. հին-պարսկ. gāthu (=գաթու)=գնդ. gatu, միջին պարսկ. gāh, յորմէ հայերէն փոխառեալ գահ, նոր-պարսկ. gah. հին-պարսկ. prthu (=պրթու)=գնդ. peretu է միջին պարսկ. puhl puh, քուրդերէն por (=փրր) կամուրջ, Այսպէս և հին պարսկ. Parthava=Պարթև յունար. Partha կանոնաւորապէս պիտի լինէր Palhav, Pahlav=Պահլաւ, Պահլաւ (Տես Hübischmann, Pers. stud. 207).

Պարթև բառն միջին-պարսկերէնի մէջ՝ ըստ հնչափոխութեան անհրաժեշտաբար դառնալով Պահլաւ, բնականաբար ամբողջ Սրանի մէջ կը դադարի իւր բուն ձևով գոյութիւն ունենալ, ասպարէզն իւր ծպտեալ յաջորդին թողլով, որ և ցարդ յայտնի է նոր-պարսկերէնի մէջ՝ թէպէտ վերացական իմաստով. այն է, Pehlevan (Pahlav-ân—պահլաւ-եան) փեհլեան և կը նշանակէ «հերոս, քաջ». այսպէս Շահնամէի մէջ «ei pehlû nâmdâr ÷ քաջդ անուանի, կամ „be her nâmdâri u her pehlevi—“ առ իւրաքանչիւր անուանին և առ մէն մի հերոսն» (Olshausen, էջ 19):—Հայերէն, որի հնումն փոխ էր առեր Պարթև բառն և միջին պարսկ. Պահլաւն, պահեց երկուսն ևս առընթեր միմեանց՝ նման ուրիշ շատ փոխառեալ բառերու, որոնք տարբեր ժամանակ զանազան ձևով փոխանակուելով՝ կը շարունակեն միասին ապրել, և մեր մատենագիրքը անխտիր են երկուքի գործածութեան նկատմամբ և միշտ նոյն համարելու գիտակցութեամբ: Միայն հետաքրքիր է դիտել, զի մինչ Պահլաւն այ-

ժըմ լուծ է կենդանի հայ բարբառներու մէջ. Պարթևն ցարդ կենդանի է հայ ժողովրդի մէջ եւ ամէն հայաստանցի գիւղացիէն կարելի է լսել Պարթև մարդ ասացուածն երբ ուզէ իւր հիացումն արտայայտել թիկնաւէտ, անձնեայ և գեղադէմ մարդու մի նկատմամբ:

Վերադառնալով մեր եզրակացութեանց՝ լեզուաքննական այս հետազոտութենէն ևս կարող ենք դուրս բերել հետեւեալները.

ժա) Հայք փոխ են առեր Արշակ բառն իբր յատուկ անուն, զի իբր անուն արդէն վաղուց գոյութիւն ունէր, և ոչ իբր հասարակ գոյական և ապա տիտղոս կամ անուն դարձեր.

ժբ) Արշակ է արմատական, ինքնուրոյն բառ է և ոչ մի լեզուաքննութեամբ կարելի նոյն կամ կրճատումն ու աղաւաղութիւն համարել Գսեքքսէս անուան, և «արքայ» նշանակել.

ժգ) Սրշակունիք=Asakânân քերականօրէն (պարսիկ. հայ յոյն) կը պարունակէ արդէն իւր ճիշդ նշանակութիւնը, որ է Արշակեան.

ժդ) Պարթև բառն պարսկերէնի հնչափոխութեան ընդհանուր օրէնքին ենթարկուելով՝ միջին պարսկ. մէջ անհրաժեշտաբար պիտի դառնար Պահլաւ:

Սոյն մասն փակելէն առաջ՝ չմոռանանք յիշել նաև մի կէտ. արամերէն (syri.) arsakâya կը նշանակէ արքայական. պատճառն շատ պարզ է. և միակ օրինակը չէ լեզուաքննութեան մէջ, երբ յատուկ անուն մի կըստանայ իւր պատմութեան ընթացքին հասարակ գոյականի մի նշանակութիւն. առ այս բաւական է միայն յիշել, թէ այսօրուայ մեր կայսր և գերմանաց kaiser են լատին Caesar (cäsar) յայտնի Յուլիոս Կեսարի անունը, զոր և հին սլաւներն փոխառին իբր cesari, իսկ ռուսներն աստի կըճատելով՝ ունին zar—ցար կոչումը և ռուսաց ցարն է ռուսաց Թագաւոր: Մի նման դէպքի արդիւնք է նաև ռուսաց koroli (karol) Թագաւոր տիտղոսն, որ կըծափէ մեծն Կարալոսի անունէն: (Տես Kluge *), էջ 181). Նթէ այս

*) F. Kluge, Etymolog. Wört. d. Deutsche sprache. V. Auf. Strassburg, 1894.

դէպքերն թոյլ կուտան եզրակացնել, թէ Cäsar և Karalos նախնաբար կընշանակեն կայսր և թագաւոր, այն ժամանակ և Գարազաշ. իրաւունք կունենայ պնդել, թէ Արշակ կը նշանակէ թագաւորական:

Այս հետազոտութիւն լաւ է նոյն իսկ մեր «Քննակ. Պատ.» հեղինակի նշանակալից խօսքերովն կնքել (հ. ա. էջ. 231)—Ապաքէն պիտի հաւատայինք Գարազաշին, ինչպէս ցարդ շատերըն հաւատացին, թէ Արշակունի չի նշանակեր Արշակեան, եթէ պատմութիւն ու բանասիրութիւնը չգային մեկնել ու վերջստուգել այն, ինչ որ մեր նախնիք արդէն դարեր յառաջ ճանաչել ու հաւատարմաբար աւանդել են մեզ և բնաւ չեն փոքրձեր խրախոյս բառնալ մի գիտութեան անունով, որու մասին ո՛ր և է տեղեկութիւն չեն ունեցեր:

Միւս ստուգաբանուած քառեր.

Արշակունի, Պալթև ու Պահլաւ բառերն ստուգաբանելէն յետոյ՝ մեզ կըմնայ հետզհետէ ստուգաբանել և հետեւեալները.

2. ՎԵՀ, ՎԱՀԱԳՆ, ԲԱԳ, ԲԱԳԱՐԱՏ և այլն. նախ կարդանք Գարազաշ. գրածն. «Գիտենք, թէ Սմբատ, Բագարատ, Վարազ՝ արիական բառեր են, ...: Սմբատ՝ սիմ (արծաթ) և պատ (շէն) արիական բառերէն կը բաղկանայ: Բագարատ նոյնպէս արիական բառ է և կը թուի նշանակել աստուածատուր-բազ (դէք) և երեստ (հա) բառերէն. իսկ Վարազ, որ Սասանեանց ժամանակ փոխուելով Պերոզ եղած է՝ կընշանակէ յաղթող...: Վարազտիրոց, Վարազվաղան, Վարազդէն» (էջ 173. հ. ա.):

«Վարաժ անունը մօտ է ի Վարազ, ուստի Վարաժ լինի քաջ որսորդ վարազուց...» (հ. ա. էջ. 244).

«Մարթ է կարծել, թէ Բագրատունիք այսպէս կոչուած էին իբր նուիրական անձինք որպէս զՎահուոնիս, որ քուրմէին ցեղով և որոյ անուան առաջին բառը վահ՝ բազ բառին ուրիշ ձևն է և միևնոյն նշանակութիւնն ունի» (անդ. 178):

«Յայտնի է (??) սակայն հայոց հին լեզուէն, թէ Վահուոնիս կ'ելլէ վահ բառէն, որ կը պատասխանէ հնդկերոյական լեզուներէն ոմանց պոկ կամ բաշ բառին որ է աստուած կամ դէք:

Ուստի Վահուհին թուի նշանակել աստուածեան կամ աստուածոց նուիրեալ ցեղ: (Անդ. 255):

«Ըստ մեզ՝ այս բազ բառին հայեցի ձևն է վահ, որ կը տեսնուի յանուանս ինչ, որպէս Վահագն, Վահէվահեան, Վահուհի, Վահան, և ի յատուկ անուանս ինչ, որպէս Վահրամ, Վահրիճ: (Անդ. 269): և այլն...

Այս հաստուածներու մէջ ասուգաբանած և միասին բերած բառերն բոլորովին տարբեր արմատներէ կը ծագին. սակայն Գարագաշ. իւր սովորական եղանակով միասին է բերեր և նոցա վերայ իւր տեսութիւնն հիմներ. վերլուծենք այս խառնափնթորութիւնը:

Վեհ=պահլ. veh (=վհ), որմէ փոխ է առած հայն. հին-պարսկ. vahyaz—(dāta) յատուկ անուն, գենդ. vohu, vahyo նոր-պարսկ. bih բարի, լաւ, յաւագոյն նշանակութեամբ: (H. Prs. *) stud. 129. Hr. Prs. Etym. 55):

Այս վեհ բառն չի՞ կարող նոյն լինել Վահագն, Վահրամ Վահրիճ բառերու վահ—վանկի հետ, զի այս «վահ»-ի ծագումն բոլորովին այլ է.

Սանսկրիտ vrtra-han (—վրտրա-հան) է՝ նախ անուն դեի մի (չար ոգի), որ ինդրա (Indra) աստուծմէ սպանուեցաւ. երկրորդ կընշանակէ՝ թշնամի և այլն. han=նախապէս ghan (արմատակից բնիկ հայ գան, գան-ել բառին) կընշանակէ զարնել, գանել, սպանել. ախոյեան տապալել. յաղթութիւն, պատերազմ... ուստի ըստ վեդայի vrtra-han (=vrtraghn) է վրթրա-սպան(ող) կամ թշնամի-սպանող: Այս բարդ բառն մակդիրն է ինդրա աստուծուն, որ սպաներ է զչարն Վրթրա և կը կոչուի vrtra-han: (Տես Grassmann, վերև յիշած երկը, էջ 1336 եւ 1641):—Նոյն բառն գենդ. մէջ է. verethragna—աստուած յաղթութեան, որ հին-պարսկ. մէջ ըստ կանոնի հնչադարձութեան պիտի լինէր՝ vrthragna—: Արշակունեաց լեզուի (հին-պահլաւերէն) մէջ th փոխուելով h՝ յառաջ եկաւ varhragn (=վահրհագն), զոր հայք փոխառին նախ իբր Վարհագն, աւտի հայերէնի մէջ որ և ըր՝ h-ի վերածուելով (որ փոխառեալ բառերու մէջ յաճախ երևոյթ մ'է) եղաւ Վահագն: Պահլաւերէնի մէջ th՝ h-ի փոխուելէն յետոյ h—agn՝ an դառնալով յառաջա-

*) Hübschmann, Persische Studien. Strassburg 1895.

ցաւ Սասանեանց արձանագրութեանց և դրամներու վերայի՝ Varahran (=Վարահրան) ձեռ (Nöldeke, Tabari 46). զոր Յոյնք կը գրեն Bararānes, Goraranes, իսկ այս աւելի սղեալ՝ Մանգիերէն՝ Բահրան Bahran: Պահլաւերէն զայս գրուած կը գտնենք Varahran նաև կը ճատ ձևով՝ Vahram. այս սասանեան շրջանի ձևովն երկրորդ անգամ փոխառին հայք իբր Վահրամ, որ նոյն է ն.-պարսկ. և արաբ. Bahram, յոյն՝ Barames կամ Baram (Fab. 46): Վերջինս բուն սասանական կը ճատ ձևն է Վ.ում (Վը-ում-Շապուհ): Փարսկեցու (էջ 49) Վ.ում կը ման աբջայն—ն.-պրսկ. Bahram Kermān-sāh (Hübschmann, Arm.*) Lw. 77—78.)

Վանքիմ բոլորովին տարրեր անուն է. և է պրսկ. Vahriz (=Վահրիզ) յայտնի անունն. ըստ Համգայի և Պրակոպի ժառանգական ազնուական տիտղոս մէ (H. Arm. Lw. 78). Ստղաբաճանութիւնն անծանօթ:

Վերոյիշեալէն պարզ է, որ վահ-վանկն իւր ունեցած ստուգաբանութեամբ ոչ մի կերպ կարող է նոյնանալ վահ ևս առաւել բազ բառերու հետ:

Բագարատ=աստուածատուր նշանակելն ուղիղ է. բայց Գարագայի տուած ստուգաբանութիւնն սխալ Բագարատ կարող է երկու կերպ ստուգաբանուիլ՝ ա) բազ=հ.-պարս. бага, գնդ. бага (=բաղա), սնսկր. bhāgha, պաւոներէն bogu, ռուսեր. bog (բող) (սա է Գարագալ պոկ)+սանսկր. rata (րա) (տալ)=Baga+rat կամ բ) бага+data=հայ բագա+րատ (զի հ.-պարս. d կը փոխուի հայերէնի մէջ ր, ինչպէս՝ Mad=Մարք): Ուրեմն երկրորդ մասն dat կամ rat չի կարող լինել բնիկ հայ երես (ետ) բայն, որու արմատակիցն է սանսկր. da-da-mi=տամ

*) Hübschmann, Պարսից փոխառեալ բառեր հայերէնի մէջ. (ընդ մամլով):

Ծանօթ. Աստ հարկ կը համարիմ յայտնել, որ անուններու և բառերու մեծագոյն մասի ստուգաբանութիւնն առնուած է յիշեալ երկէն, զոր կը ճատ ձեռով պիտի նշանակենք Arm. L.: Այլեւ պէտք է ասենք, թէ սոյն աշխատութեան հայերէն փոխադրութեան մէջ առանձին մասով բացատրուած են այն հնչափոխութեան օրէնքներն, որուն ենթարկուած են հայերէնի մէջ պարսից փոխառեալ բառերը:

զնդ. dadammī: Հայ երեսոսնկր. á da-t, զնդ. da-t: (Hr. Prs. Etym. 269, H. Arm. Lw. 31 և Pers. Stud. 201):

Թէ քնչպէս Վարազն Պերոզ կըլինի և ապա Վարաժ չգիտենք, միայն գիտենք, որ Վարազ=ն.-պրսկ, Baraz (=Բարազ). որ իբր նշանական բառ է սնկր. varaha,—զնդ. varaza (=վարազա), պահլ. varaz, յորմէ հայն փոխ. Վարազ, ն.-պրսկ. guraz, քիւրտեր. baraz: Սա իբր յատուկ անուն ունին և Պարսք Baraz. սասանեանց սովորութեան համեմատ և հայք Վարազ իբր առանձին և ապա մեծ քանակութեամբ բարդ կամ կից մի ուրիշ անուան հետ՝ Վարազ Վաղան, Վարազ-Շապուհ. և այլն. (H. Prs. stud; 157, և Arm. Lw. 81, Hr. Prs. Etym. 200):

Պերոզ=ն. պարսկ. Peroz, արբ. Fairuz, յնր. Perozes, պհլ. Peroz յորմէ հայն փոխ. Պերոզ և ըստ Խորեն. Ամիանոսի, Ֆիրդուսու և այլոց կը նշանակէ (յաղթող). պահ. peroz.-kar է (յաղթական) ն.-պրս. piroz ստուգաբանութիւնը մութ: (H. Arm. Lid. 67, Hr. Pers. Etym. 78.):

Իսկ ինչ կը վերաբերի Վարազ անուան մերձեցման ի Վարաժ՝ այն միայն Գարազաշ. կարող է հասկանալ և ստուգաբանել «իբր քաջ որսորդ վարազոց». Ուր քմահաճոյքը կը խօսի, անդ այլ ևս գիտութիւնը կըլուէ:

Այս խմբի մէջ յիշուած միւս անուններն՝ Վահան, Վահուհի, Վահէվանեան դեռ մութն են իրենց ստուգաբանութեամբ. իսկ լոկ ենթադրութիւնք ոչ մի արժէք կարող են ունենալ նոցա մեկնութեան համար: Սոյն տեսակէն է և Սմբատ, զոր Գարազաշ. դարձեալ կը փորձէ ստուգաբանել իւր ճկուն արուեստով. մեզ կը մնայ շնորհաւորել միայն իւր գիւտն, որ նոյնքան հանճարեղ է, որքան և միւսներն: Միայն փափագելի էր իմանալ, թէ ապատ (ոչ թէ պատ. տես վարք) քնչ կանոնով դարձեր է բաղ, և պարսկ. sim (արծաթ, պահլ. asim, asimīn, որ յատկ. փոխառեալ բառ մէ պարսկ. մէջ (տես Hr. Etym. 169) կարող էր միանալ ապատի հետ:

3. ԱԺԴԱՀԱԿ, ԶԱՀԱԿ ԵՒ ՀՐԵԴՈՒՆ.—Աժի և տահազա, ըստ պարսից զոհակ՝ հին սանսքրիդ բառեր են. որոց կը պատասխանեն հայերէն ած (օձ(կամ իծ և զոհել (սպանել) բառերը. ուստի աժիտահազայն այլաբանական անուն է չար ոգւոյն որ է օձ սպանող: Իսկ Թրիւա, ըստ պարսից Ֆրիդոն, հայերէն փորձող...» (Հ. Ա. 51):

Աժդահակ=պահլ. azidahak (=աժիդահակ), aze dahak, զնդ. azi dahaka (azis dahako աժիշ դահակո) վիշապ դահակ, ն. պարս. azdaha (աժդահա) վիշապ. արաբացրած ձևն է՝ Zahhak (=Ջահհակ) երանի թագաւոր՝ ըստ Ֆիրդուսու. վերջինս ունի և azdahafas (=աժդահաֆաշ) վիշապանման՝ նշանակութեամբ (H. Arm. Zw. 32: Hr. Etym. 19): Այս անուան մէջ աժի (azi) կամ աժիշ=իժ, սնկր. ahi-s. հայ իժ փոխառեալ և անհնար է բնիկ հայ աւձ (օձ) հետ ստուգաբանօրէն նոյնացնել. վերջինս է բուն հայ բառ և կարելի է համեմատել լատիներէն anguis, հրգրմ. unc և լիտ. angis բառերու հետ. (տես Hübisch. Arm. Stud.): Սակայն դահակ բառի նոյնացնելն հայ ղոնկ բառի հետ՝ հիմնուելով արաբացի Ջահհակ ձևի վերայ, ստուգաբանական խայտառակութիւն մի լինելէ զատ՝ զեղեցիկ ապացոյց մ'է այն խորին հմտութեան, զոր ունի հեղինակն լեզուաբնական շրջանի մէջ. Ջահհակ (Zahhak, Dahhak) արաբացրած ձևն է բուն պարսիկ Դահակ (Dahak) անուան, որու ստուգաբանութիւն դեռ յայտնի չէ. իսկ թէ ինչու և Ֆիրդուսին նոյնպէս Dahhak կը գործածէ, զայս ևս այսպէս կը պարզէ Nöldeke. «Այս չափազանցրած նկարագրութիւնը (Բահրամ պարսիկ արքայի աշխարհակալութեան ստորագրութիւն է Արաբիոյ մէջ) յառաջ կուգայ պարսիկներու՝ յաղթական Մուսլիմներու դէմ տածած բուռն ատելութենէն. նոյն իսկ ատելութիւնն, որ դեւերու իշխանը (Taufelsfürst) Դահակը (Dahak) արաբ կը համարուի և այն՝ իսկ արաբացի Ջահհակ (Dahhak) անուան ձևով»: (Tabari, 57): Այն ինչ հայերէն ղոն, զոհ-ել—պահլ. zohr, որ կը ծագի զնդ. zaothra—զոհաբաշխութիւն, նուիրական ջուր բառէն. արմատն է սանսկր. hu սրսկող, զոհ մատուցանող, քրմապետ, ուստի hotra սրսկումն զոհի, աստի է զենդերէնը. փարսի՝ zor օրհնեալ ջուր: (H. Prs. Stud. 206: Hr. 149:)

Պարսիկ ֆրիտուն, զոր Գարադաշ. կը յիշէ, է հայերէն հրուդէն այլ ոչ փորձող: Fredun (Ֆրեդուն) պահլաւ և ն. պրսկ. ձևի զնդ. է Thraetaona (=Թրաետաոնա), որ որդի Athwya (=Աթվիա) աստուծու և արդեամբ կը համապատասխանէ ամբողջովին վետայի Trita (թերևս նշանակէ «երրորդը») աստուծուն, որ ունի Aptya «ջրաբնակ» մակդիրն. բառս մակդիր է նաև մի ամբողջ դից ընտանիքի: Ուստի՝ վեդայի Trita=սանսկր.

Traitana գդ. Thraetaona պահլ. և հայրսկ. Fredun, հայն հրու-
դեն, և այս բոլորովին հնչադարձման կանոնով. ուրեմն և ոչ մի
աղերս ունի հայ փրիդի հետ. (Sku Fick. vergl. Wort. 229:
Grassmann, 557. 560):

4. ԽՈՌԻ, ՄԱՆԱԽԱԶ, ԲԱԶ.— Թէ Մանաւազ և Բազ ար-
դարեւ անձինք էին... զայսցանէ որոշ ինչ ասել չունիմք: Խոռ-
խոռուռնի անունը միայն քննենք աստ... Թէ Խոռ պատմական
անձն էր թէ ոչ՝ թողունք այս խնդիրը. տեսնենք միայն, թէ
Խոռխոռուռնի անունը կընամր այլուտեք, գէթ հաւանականա-
պէս, առնուլ ծագում: Խոռխոռ հին արեւելեան լեզուի մը (մոն-
գոլերէն, թէ չինարէն) բառ է և կը պատասխանէ հայերէն կար-
կառ (ինչո՞ւ ոչ բարբառ կամ մի այլ բառ) լատիններէն carcer և
գերմաներէն kerker բառերուն, որ չը նշանակեն քարակոյտ
կամ բանտ, որպիսի էր Վանայ բերդը: (Հետաքրքիր է կար-
դալ շարունակութիւնը, զոր ընդարձակութեան պատճառով
չենք կարող մէջ բերել): (Էջ 147—148 ա. հ.):

Մանասոյ և Բազ անուններու մասին որոշ ինչ չունի ասե-
լու Գարագաշ. սակայն մենք կարող ենք ասել, որ երկուքն ևս
փոխառեալ բառեր են պարսկերէնէ. այսպէս.

Մանաւազ=յունար. Monobazos Ադեաթենի թագաւոր.
երկրորդական անուամբ կը կոչուէր նաև Bazaios և Monobasos:
Անուանս վերջին մասը կը գտնուի Arta-bazos, Tiri-basos,
Farna-bazos: Այս Bazos=Bazaios կը ճատ ձեն է և հայ բազ
անունը: (H. Arm. Lw. 51):

Շատ ճարտար կերպով ստուգաբանուած է Խոռխոռուռնի ա-
նուն. թէ ինչպէս խոռխոռին կարկառ, կը պատասխանէ, մեզ
չի բացատրեր հեղինակն. միայն այսչափն կարելի է տեսնել, որ
նա դիմեր է Վարկառ-ի միջնորդութեան՝ լատիններէն carcer-ին
հասնելու համար. իսկ թէ հայ կրկնալանկ կարկառն բոլորո-
վին այլ նշանակութիւն ունի՞ քան լատ. carcer, որ միայն
բանտ կը նշանակէ, բոլորովին նշանակութիւն չունի հեղինա-
կի համար. նա չի հարցներ նոյնպէս, թէ ինչ օրէնքով լատին
carcer (գերման. kerker լատիններէն փոխառեալ բառ է.) կա-
րող էր հայ կարկառ և ապա խոռխոռ դառնալ՝ քանի որ իբր
համեմատեալ բանասիրութեան անունով խօսողի ծանօթ պի-
տի լինէր իրեն, որ լատին c—հնդրպ. նախալեզուի k=հայ ս,

օրինակ՝ լատին *decem* = յունք. *deca* է հայ տասն, սնակր. *alaca* (= դաշա), սլաւոն. *deseti*, ռուս. *десять* (= դեսետա)... տես Brugmann, Grund. Verg. gram. I, 290, 307): Այս էական պայմաններն նորա համար նշանակութիւն չունին, զի Գարագաշ. ուղածը գիտութիւնը չէ, նորան պէտք է Վանայ լերդի նկուղներու առեղծուածն լուծել. ուստի խոռխոռ կարդառի բարձունքէն կը թռչի մինչև Գերմանիա, անտի Խտալիա և կը գտնէ *carcer*, *kerker*, հանելուկն արդէն լուծուած է... խոռխոռը կը դառնայ բանտ և խոռխոռունին նորա պահապանը, Հիանալի թռիչք... բաց օփսոս, որ վախճանն է *carcer*...

Իսկ թէ ինչ կը նշանակէ խոռ, առ այժմ ոչինչ ունինք տսելու, թերևս ապագան առաւել յաջող մեկնութիւն տայ և ազատէ զմեզ *carcer*’է:

Սոյն հանճարեղ ստուգաբանութեան կարգը դասելու է և Մաղխազ՝ դեռ ևս չստուգաբանուած անուան տուած մեկնութիւնը. „Գիտելի է սակայն, զի այս հին սեմական բառը մաղխազ համանուն հայերէն արքունի և պարսկերէն (?) ոստան լառերու... (հ. ա. 243):

Մաղխազ կամ մաղխաղունի, որ սեմական կամ թերևս հին քուշեան լեզուին մալաքա կամ մէլլէի, թագաւորական, բառն էա: (Անդ, 149): Ուստի յայտնի է Գարագաշ. թէ մաղխազ հին սեմական կամ թերևս քուշեան է և ինչ կանոնով մէլլէի փոխուեր. ո՛ր իւր աղագոյցներն: Այս բառի համար յատկապէս դիմեցի ուսուցչապետ Nöldeke՝ ին և յիշեցուցի մէլլէ բառն. նա իւր սովորական երգիծական ժպիտը չրթունքներին պատասխանեց. «չեմ կարծեր, թէ սեմական մէլլէը՝ իրեն բոլորովին անմասն մաղխազ մի թողած լինի իբր ժառանգ»:

Այսպէս բոլորովին անապահով է Շակ (հ. ա. 150) և Սիւսկ ու Սախաստսն անունները մերձեցումն, ոչ երբէք պարսիկ սակ կարող էր հայ շակ դառնալ և ոչ ընդհակառակն: Սիւսակ՝ (ենթադրէ (սէս-ակ) բառ մի, որ ցարդ անծանօթ է: Ինչ որ Ստրաբոն կաւանդէ այս մասի, մուծն է. և ինչոր Դ. Լադարդ կրմեկնէ, որմէ և օգտուած կը թուի Գարագաշ. անորոշ է միանգամայն և դեռ անստոյգ ու սխալ:

Ենթադրութիւնք. ինչպէս վերը տեսանք, ըստ Մաքս Միլլէրի՝ որչափ և հաւանական թուին բացարձակաբար պիտի մերժուին ստուգաբանութեան չրջանէ. գիտութիւնը օրէնք կրպահանջէ և հաստատութիւն. ուստի մեզ համար միանգամայն ա-

ռանց իմաստի կրման՝ արեւելեան լեզուի մը բառէ, թերեւ հին սեմական կամ քուչեան բառ մ'է, ինչպէս յայտնի է, կամ այս ինչ բառին ուրիշ ձեւն է... և նման ասացումներ, երբ դոցա չեն կանխեր կամ յաջորդեր լեզուաբանական ճշգրիտ մեկնութիւնը: Առանց գիտական փաստերու մի նշանախնդի համար իսկ չենք կարող Գարագաշին հաւատալ, մանաւանդ զի այնքան չարաչար կը կիրարկէ իւր ընթերցողներու առ ինքն տաժած վստահութիւնը: Մեզ գիտնականօրէն հաստատութիւն է պէտք և ոչ պատ ի պատ դարձուածներ:

5. Մեզ կը մնայ դեռ ևս մի քանի բառերու ստուգաբանութիւնն ևս ճշտել և այսպիսով վերջ տալ և այս մասին:—Ինտոդուկեան արժանի է և հետեւեալ հատուած, ուր Գարագաշ կը դիմէ բառերու ժամանակագրութիւնը որոշելու համար Տիգրանակերտի հնութեան:

«Եկրտ մասնկէն եւս յայտնի է, թէ չէր Դարթ զՏիգրանակերտ այնպէս հին համարել, որպէս դնէ Խորենացին: Քան զկերտ առաջ են հայերէն շէն և աւան, ինչպէս կըտեսնենք 'ի հնագոյն անուանս, որպէս Շակաշէն, Նախճաւան: Յետ Դարեհի, երբ պաշտօնական լեզու եղաւ պարսկերէնը, մուծաւ կերտ, ինչպէս նաեւ շատ եւ պատ որ միեւնոյն իմաստն ունին, որպէս Նրուանդակերտ, Արտաշատ, Վաղարշապատ, եւ յայտնի է թէ համեմատութեամբ յետնագոյն են, այն է ուր Արշակունեօք» (Ա. 194. 147):

Ի զուր հեղինակն աստ յիշած բառերն հայերէն եւ ոչ հայերէն բաժանելով տուածիններուն կը վերագրէ բացարձակ հնութիւն. զի բոլորն եւս անխտիր պահլաւ փոխառեալ բառեր են եւ միաժամանակ ընդունուած՝ ինչպէս պարզ կ'երեւի իրենց հնչադարձութենէն.

— կերտ=պահլ. kert (=կերտ), զնդ. kereta—, սանկր. krta, իսկ նոր-պրսկ.—gird (=գիրդ). իրանական արմատն է krt. (կրտ): (H. Prs. Stud. 130):

շէն=պահլ. sen (=չէն), գոր. Sayana, արմատն՝ si— (=շի), սանկր. ksi բնակիլ, (H. անդ. 167. Brugm. II, 279):

աւան=հպ. avahana—գիւղ, թէպէտ պէտք է պահլ. avahan ունենար, յորմէ եւ հայն եւս՝ աւահան փոխանակ՝ աւան. և տառի զեղջումն, որ սասանեանց ժամանակի երեւոյթ մ'է, աւան բառին կուտայ ժամանակի յետնութիւն մի, որ կասկածե-

լի է. ուստի բոլորովին ապահով չէ այս ստուգաբանութիւնը.
(H. Arm. Lw. 112. Prs. Stud. 176, 217):

—շատ=պահլ. sat, զնդ. saiti—, հպ. siyati—, նպ. sad-
հանգիստ, ուրախութիւն: Արտա-շատ=Արտաշէս-ա-շատ=հպ.
Artasathra—siyati և կը նշանակէ Արտաշէսի հանգիստ, ու-
րախութիւն: (H. Arm. Lw, 28. Hr. grund. 169):

—ապատ=պահլ. apat (=ապատ), նպ. abad (=աբադ).
Խիստ յաճախ քաղաքներու անուան երկրորդ մասը՝ Վաղարշ-
ապատ Պերող—ապատ, և կը նշանակէ՝ շէն, շէնցրած, մը-
շակուած: Միայն Նղիշէն կը գործածէ իբր առանձին բառանա-
պատի հետ: Այս ապատ չպէտք է նոյնացնել, զոր Գարագաշ. կը
միացնէ, պատ, պատ-ել բառի հետ, որ բոլորովին տարբեր է.
(H. Arm. Lw. 97):

Յիշենք աստ նաև հետեւեալն.

6. Սեպուհ բառին ուրիշ ձևն է սպայ, որ կընշանակէր
զինուոր, մանաւանդ ձիաւոր, (հ. բ. 10, 47):

Սեպուհ բառի ստուգաբանութեան վերայ աւելորդ կըհա-
մարինք խօսիլ, քանի որ դեռ ճշտուած չէ. լաւագոյն մեկնու-
թիւնը՝ տուած է ուսուցչապետն Ն. Մառ, որ պահլ. vis-puhr
ձևին կը վերածէ. սակայն հնչադարձա՛յան դժուարութիւն մի
դեռ կայ հարթելու: Այս հատուածն ընթերցողը կարող են
գտնել «Հանդէս Ամս.» 1892, էջ. 164: Իսկ սպայ բառի ստու-
գաբանութիւնը կամ պատմութիւնն հետեւեալն է, որ Սե-
պուհի հետ բնաւ գործ չունի: Սպայ բառն երեք տարբեր ժա-
մանակ և տարբեր ձևով փոխ է առնուած հայերէնի մէջ.

ա) հպ.—spad—, զնդ. spada—գօրք, հ.-յ. սպար—, սպար-
ա-պետ որու հնագոյն պահլ. նախատիպն պիտի լինէր՝ spada-
pet. (հպ. d=հ.-յ. բ. անս վերը).

բ) հպ. spad—, զնդ. spada, պհլ. spah, spah-pat=հ.-յ.
սպահ, սպահ-ա-պետ և ա-սպահ-ա-պետ:

գ) հպ. spad—, զնդ. spada, պհլ. spâh, նպսկ. sipah,
sipah=սպայ, սպայ ա-պետ. (Hr. Grdr. 155: H. Prs. stud. 201):

Աստէն կարելի էր տալ և պարսկ, պայ, նիհադ, շահապետ,
զէն և այլն բառերու ստուգաբանութիւնը, զորս Գարագաշ. հայ
կը համարէ, որոնք սակայն պահլ փոխառեալ բառեր են. բայց

որովհետեւ պատմութեան համար այնքան կար երբութիւն չունին և «հայ փոխառեալ բառեր» ու մէջ արդէն խօսուած է, առայժմ աւելորդ կը համարիմք երկարել այս շարքը, որ և առանց նոցա բաւական կրկար եղաւ:—

Գարաբաշեան լաւ գիտէ, թէ որքան դժուար է հին անուններ ստուգաբանելն, ուստի կը գրէ. «Նայելով մեր արդի տեղեկութեանց զհին լեզուաց եւ զպատմութենէ՝ լաւագոյն է այսպիսի վաղեմի, դրեթէ նախասլատմական անուններ ստուգաբանելէ հրաժարիլ, քան մեկնութիւններ տալ ըստ քմաց» (հ. ա. 157): Ճիշդ իւր դերն քաջ ըմբռնող մարդու մի խոստովանութիւն է. և մենք կատարելապէս համոձայն ենք իրեն, մանաւանդ երբ լեզուաբանական օրէնքով չենք ձեռնհաս հաստատել, ինչ որ կը ստուգաբանենք: Սակայն ցաւալի է, որ ինքն չի հետևիր այս սկզբունքին, և հիմնուելով «ենթադրութեանց և անհեղեղ ստուգաբանութեանց վերայ» (իւր բոլոր ստուգաբանութիւնք այսպէս են) ձեռնամուխ կը լինի լուծել հին անուններու պարունակած դադտնիքն առանց հաստատուն կըռուան մի ունենալու և առանց ապացուցանելու: Եւ ճիշդ այս կէտն է, որ այնքան մեծ չափով կընուակեցնէ իւր գործի արժէքն՝ տարակուսական ցուցնելով և իւր ալ զուտ պատմական հետազոտութիւններն:

Գ. ՀԱԹԶ, ԱԻՆՍՏԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԵՒ ՊՐՍԿ. ԲԵՒՆԻԱԳՐՆԵՐ.

Ըստ Գարաբաշի՝ «Խորենացին կընդունի առանց քննութեան և կը պատմէ առանց ապացուցի» (հ. ա. 90): Թէ սոյն տողերու հեղինակն որչափ կը քննէ իւր նիւթերն եւ ինչպէս կ'ապացուցանէ իւր եզրակացութիւնք, ըստ բաւականին, կարծենք, պարզուեցաւ ցարդ. այժմ տեսնենք և հետեւեալ հատուածներու ապացուցութիւնք.

«Իսկ հայ բառին համար չէ անդէսլ ասել, թէ է սեմական բառն հայ—կենդանի, զոր ընտրած են ինքեանց նախնի Արարատեանք, թելագրեալ իրենց դրացի արիական ազգին զենդ կամ զանդիկ կոչմանէն, որ կը նշանակէ կենդանի» (հ. ա. 159):

Ձանդ կամ զանդիկ բառն Գարաբաշի գրչի ներքոյ դարձած է դիւթական անուն մի՝ հազած դիւթական վերարկու, որու

տակ կապաստանեն ըրոր անստոյգ բառերն ու դժուարին խնդիրներն և այսպիսով, կարծէք, կաներևութանան զինքեանս հալածող հետախոյզ աչքէ. ուստի արժէ փոքր ինչ մօտէն ճանաչել զնա և հարցնել ուստի և ինչ լինելն:

Զենդ բառն ոչ ազգի անուն է և ոչ ևս ո և է առանձին լեզու կը նշանակէ. զանդ (zand) կը նշանակէ բացատրութիւն մեկնութիւն, և այս բառով կոչուած է այն մատեանն, որ կը պարունակէ պարսից սուրբ գրոց (աւեստայի) մեկնութիւնը պահլաւերէն լեզուով (միջին պարսկերէն), ուրեմն zandի այսինքն՝ այս մեկնութեան իսկական լեզուն է պահլաւերէն:

Նոյնպէս Աւեստա (Avesta) չի նշանակէր ո և է լեզու, այլ կոչումն է պարսիկ սուրբ գրոց (yasna, vispered, vendidad...): Զենդ-աւեստա կը նշանակէ մեկնութիւն և ս. գիրք կամ մեկնութիւն և բնագիր: Առաւել ճիշդ է պահլաւերէն կոչումը. Avestak va zend (==աւեստա և զենդ) «օրէնք կամ բնագիր և մեկնութիւն (նորա)», զոր և ցարդ հրապաշտ պարսերը կը պահեն —աւեստա—զանդ (ս. գիրք և մեկնութիւն) հասկանալով:

Սակայն գիտունք պայմանաւորուած են զանդ (zand) բառով հասկանալ Աւեստայի լեզուն, ուրեմն բուն ս. գրքի լեզուն և ոչ զանդ անուն կրող պահ. մեկնութիւնը. Վերջին նշանակութեամբ առաջին անգամ կիրարկեր է Խաքանի (Chaqani) և այլ մահմեդական հեղինակներ, զոր արդ փոխել՝ այլ ևս աննշանակ կը համարին արեւելագէտներն: Սոյն երկու բառի նշանակութիւնը թէպէտ ճշդուած, բայց ստուգաբանութիւն դեռ ոչ (տես Darmesteter, E'tud. Iran. I, 43... *) Wil. Jackson Aves. Gram. XII. introduction).

Իսկ Գարադաշ զենդ կամ զանդիկ (կենդանի) նշանակող բառն է ոչ թէ Աւեստայի zand (—զենդ), այլ պարսկ. Zinda, zistan կեանք նշանակող բառն, որի հնագոյն և Աւեստայի ձևն է. հին պարսկ. արմատ՝ jiv—(=ջիւ), jivahy կեալ. զնդ. jvaiti, այսինքն jivaiti (==ջիւաիտի), սանկր. jiv—, jivati կեանք. պահ. zindak (zivastan). Նոր պարսկ. zistan, zinda այժմ արմատակից է հայ կեանք բառը. (H. Arm. Stud. 35. Hr. Grund. 151):

*) Will. Jackson, An Avesta Grammar in comparison with sanskrit. 1892.

Իսկ աստի Գարագաշ, նոյնպէս յայտնի է, չգիտենք ուստի, թէ հայք Արարատ լաւա՞ն ստացել են զանդիկ ցեղերէ:

«Հայ ցեղին հնդեւրոպական կամ արիական սկիզբը որչափ յայտնի է՝ նոյնչափ յայտնի է (.)», թէ այս ցեղն ստացած է իւր արարատեան գաւառը՝ զայն յառաջ քան զնա գրաւող զանդիկ ցեղերէ: Այսմ ապացոյց կրնան համարուիլ այն գաւառին և շրջակայից հին աշխարհագրական անուանք—Արարատ, Արմաւիր, Արագած, Արաքս և այլք: Առանց երկբայութեան մարթ է ասել... արիական լեզուի բարդեր են» (չարունակութիւնը կարդալ բնագրի մէջ. հ. ա. 149):

Թէ հայ ցեղն հնդեւրոպական է, հաստատուած է այս իւր լեզուի հնդեւրոպական լինելու վերայ, որ ըստ Գարագաշի «ստուգագոյն և միակ աղբիւրն է» (էջ 5), թէպէտ, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, լեզուն չի կարող միակ և ստուգագոյն աղբիւրն լինել ազգի ցեղակցութիւն որոշելու, մանաւանդ իբր ընդհանուր սկզբունք. այսու հանդերձ ցարդ հայ լեզուն է իւր ազգակցութիւն որոշող էական և գլխաւոր միջոցը և դեռ պիտի մնայ, ցորչափ հնախուզութիւն չի յայտնել նորսնոր փաստեր և դիտութիւն չի ստեղծել ընդդիմահար առարկութիւնք: Ուրեմն հայի ազգակցութիւն որոշելու համար ունինք մի իրական կռուան. սակայն ուստի յայտնի է և ո՛ր են Գարագաշի ապացոյցներն, թէ նախ քան զհայս՝ զանդիկ ցեղեր կը գրաւէին Արարատ: Միթէ «այսմ ապացոյց կրնան համարուիլ» իրեն և բոլորի համար դեռ ոչ ստուգաբանելի Արարատ, Արմաւիր... բառերն. «թէ ո՛ր լեզուի բառ է Արարատ և ինչ կը նշանակէ՝ չենք գիտեր» (էջ 157 հ. ա.): Հապա ինչպէս իմացաւ Գարագաշ, որ իւր չհասկացած բառերն առանց երկբայութեան արիական են և հետեւեալ զանդիկ. հնդեւրոպական կարող են լինել. բայց միթէ ամեն հնդեւրոպական զանդիկ է: Զիարդ և իցէ, դառնանք մեր բուն խնդրին—որոշել հայ և Աւեստայի ժողովրդեան տեղական աղբիւր:

Այն ժողովուրդն, որ երբեմն կը դաւանէր Աւեստա գրքի մէջ աւանդած կրօնը և կը խօսէր նոյն լեզուն, այժմ արեւելագէտք կանուանեն Աւեստայի ժողովուրդ, զոր Գարագաշ զենդ կը կոչէ: Այս ժողովուրդը կը բնակէր Արարատի սահմաններէն շատ հեռու գէպի արեւելք՝ զատուած ընդարձակ երկրներով և լայնածաւալ տափաստաններով. ուստի և ո՛չ մի դէպքում հայք

կարող էին Արարատը նոցանէ խել, ինչպէս կաւանդէ Գարա-
գաշ: Այո՛, կար ժամանակ, երբ յետնագոյն աւանդութեանց
վերայ հիմնուած՝ Ատրպատական ու Մարաստան կը համարուէր
հայրենիք Աւեստայի ժողովրդին, և Ուրմիայ, Վանայ ու Սե-
ւանայ լճերն կը մեկնուէին իբր ս. դբբի մէջ յիշած լճերն.
սակայն վաղուց անցած է այս խարուսիկ հրապուրով շողուն
չրջան և Աւեստայի կատարեալ ուսումնասիրութեամբ անժըխ-
տելի փաստերով դառնուեցաւ և հաստատուեցաւ այս հին ժո-
ղովրդի հայրենիքն, որ է, Պամիւի բարձրաւանդակն՝ Հինդկուշ
լեռնաշղթայէն սկսած դէպի հիւսիս-արեւելք Սիւր-դարիւս գետի
ամբողջ վերին հոսանքը, աստի դէպի արեւմուտք մինչև Արալ
լիճը եւ Կասպից ծովը. Գիլան եւ Մազանդարան դաւառներէն
ուղիղ գծով մինչեւ համունի ճահիճը եւ աստի Կանդահարով
մինչեւ Պենջար: Այս է այն մեծատարած երկիրն, ուր ապրեր
ու մուեր է Աւեստայի նշանաւոր ժողովուրդը: Ներկայս այս
տարածութիւնը կը կոչուի Արեւելեան Նրան: Աւեստայի ժողո-
վուրդն, բնակավայրն եւ ամբողջ քաղաքակրթութիւնն հիւնա-
լի կերպով ուսումնասիրած է եւ այն բուն իսկ ըստ Աւեստա-
յի ցուցումներուն վիլ. Գայգեր (W. Geiger) իւր „Ostiranische
kultur im Altertum“ 1882 յայտնի երկի մէջ: Ահա հեղինակի
ամփոփ եզրակացութիւնը. „Մեր հետազոտութենէն նախ՝ այն
կը հետեւի, թէ Աւեստայի ցուցումներն՝ երկրի որպիսութեան,
կլիմայի եւ արտադրութեանց նկատմամբ՝ կատարելապէս կը
պատշաճին այն չրջանակին, զորս ճանաչեցինք աշխարհագրա-
կան հետազոտութեամբ: Արեւելեան Նրան ունի այն լեռնաշղթ-
աներն, անապատային շերտերն, մեծամեծ գետերն ու լճերը,
որոնց մասին Աւեստան կը խօսի. իւր բոլոր մասերու մէջ հա-
մարեա, այս երկիրն ցոյց կուտայ ձմեռնային սառնամանիքի
եւ ամրան շոգի միջեւ գտնուած այն խիստ հակադրութիւնն,
զոր զրադաշտական նախնի տեղեկութիւններն մտադրութեան
արժանի կրնծայեն. նա կը պարունակէ այն հանքային հարս-
տութիւններն, կարտադրէ այն բոյսերն եւ կը սնուցանէ այն
կենդանիք, զոր կը թուէ՝ Աւեստան: Ոչ ուրեք կան այնպիսի
տեղական անուններ կամ ցուցումներ, որոնք ներէին եզրա-
կացնել, թէ Աւեստայի ժողովուրդն՝ երբեմն ճանաչեր է այլ
նկարագիր ունեցող մի երկիր՝ քան Նրանի լեռնոտ բարձրա-
ւանդակն: Հասարակածային դատու արտադրութիւնք եւ օդե-
րեւոյթք օտար են իրեն միանգամայն: Եւ եթէ՛ նա ստեղծեց
նաեւ մի անուն Հնդկաստանի հիւսիսարեւմտեան նահանգի
մի մասի համար, այս եւս ոչ երբէք կարող է Պենջարի հար-
թավայրի վերայ շատ հեռուն տարածած լինել, ոչ երբէք հե-
ռու՝ անդր քան այն որոշ սահմանը, զոր բնութիւն կը գծէ
ընդ մէջ Հնդկաստանի եւ Նրանի Սուլէման լեռնաշղթայի եր-
կարութեամբ:

Այլ խնդիր է, երբ հարցնենք. արդեօք Աւեստայի ժողո-

վրդի բնակավայրի նկատմամբ մեր ունեցած ցուցումներն, չեն առաջնորդեր մեզ՝ ըստ կարելոյն դէպի արեւմտեան Սրան՝ փոխանակ դէպի արեւելեանը։ Արդեամբ նոյն ակնարկութիւններն կարող էին նաեւ Մարաստանին ու Պարսկաստանին պատշաճել։ Անդ նոյնպէս միմեանց կը յաջորդին լեռներ ու հարթավայրք, ջրեր եւ անապատներ. անդ նոյնպէս կը հանդիպինք ձեւականին մի ցամաքային կլիմայի բնորոշ երեւոյթներու եւ միջին գօտու երկրներու արտադրութեանց։ Սակայն ցորչափ այսպիսի աներկրայելի կռուաններ ունինք, որպիսիք են Աւեստայի աշխարհագրական անուններն, զրադաշտական քաղաքակրթութեան հանդիսավայրի՝ ո՛ր եւ է տեղափոխութիւն կը համարւիմ անօգուտ եւ անիրաւ։

Բայ աստի Աւեստայի շատ ստորագրութիւններն՝ եւ դիտողութիւններն այն ժամանակ միայն որոշ ու արտայայտիչ են երբ արեւելեան Սրանի վերագրուին և նորա յարաբերութեանց միջով մեկնուին։ Ամրան և ձմրան միջև եղած կլիմայական տարբերութիւնները որ Աւեստայի մէջ մի նշանաւոր դեր կը խաղար, թէպէտ արեւմտեան Սրանի մէջ նոյնպէս մեծ է, սակայն և այնպէս, որչափ կարող եմ դատել, այնպէս ծայրայեղ չէ, ինչպէս Սողդիանաս Խորազմեան կամ Բակտրեան։ Հզօր հանդամուռնչ նաւարկելի գետեր հազիւ թէ կարողանայի գրտնել Մարաստանի մէջ. ամենամեծ չափով արժանի են այս կոչման հիւս. արեւելեան կողմ գտնուող Սիր եւ Ամու, Հիւսնդ եւ հրիրուդ քան թէ Գրգլ-Ուզուն Գարասու։ Ինձ համար տարակուսական է նոյնպէս որ անդ գտնուին այն բնական երեւոյթներն, որոնք կարողանային Զիմայի օրով տեղի ունեցած ջրհեղեղի մասին եղած աւանդութեան իբր օրինակ հանդիսանալ, որպիսիք կը ներկայանան Սաքսարդ եւ Ոքսուս գետերու ողողումներն զարնան սկզբին եւ ամրան։ Վերջապէս աստպէտք է մատնանիշ լինել եւ այն կրօնական, ազգային եւ տնտեսական այնքան խիստ աչքի ընկնող հակադրութեան վերայ որոնք մեզ կը ներկայանան Աւեստայի մէջ։ Ընդ միշտ բարին ու չարն, հաւատացողն ու անհաւատը, երկրագործն ու վաշկատունը ուր կրկին ու կրկին միմեանց հակառակ են ներկայացուած, եւ ինձ կը թուի, թէ այսպիսի մի կարգաւորեալ եւ բոլոր շրջաններու վերայ տարածուող երկբաժանումն (երկուութիւնը) ոչ ուրեք այնպէս հաստատած է բնութեան մէջ՝ որչափ արեւելեան Սրանի մէջ, ուր արգաւանդ երկիրն ու անապատը վարելահողք եւ ամայի տափաստաններ այնպէս անմիջական կերպով միմեանց կը շօշափեն. իսկ սոքա իսկզբանէ անտի ամբողջ ժողովրդի քաղաքակրթական զարգացման հոսանքն երկու բաժան ուղղութեամբ պէտք է առաջնորդէին։ (Էջ 165-166)։

Այս տեղեկութիւններէն կը հետեւի.

Նախ՝ հայեր չէին կարող Արարատը խել մի ժողովրդէն որու բնակավայրն էր հեռու արեւելք եւ որոնք բնաւ աշ-

խարհակալութեան չեն ձգտեր իրեն սահմաններէն դուրս.

Երկրորդ՝ Աւեստայի ժողովուրդն ոչ երբէք զինքն անուանած է զանդ կամ զանդիկ, զի այս բառն մահմետական շրջանի մատենադիրներէն միայն սխալ եւ կամայական կոչումն է տրուած Աւեստայի լեզուին. եւ

Երրորդ՝ զենդ սչ երբէք կը նշանակէ «կենդանի», միայն եւ միմիայն «մեկնութիւն, բացատրութիւն»:

Այսպէս ուրեմն հին հայերն բնաւ առիթ չունէին այս հեռաբնակ ժողովրդի մտացածին «կենդանի» կոչումով յափշտակուիլ եւ բարի նախանձով վտուած նոյնպէս Սեմական հայ (վան) «կենդանի կամ անասուն» անուանել: Այսպիսի հոյակապ գիտեր և ստուգաբանութիւններ կարդալով՝ մարդ ստիպուած է յակումայս բացագանչել. տես մի «համեմատեալ քանասիրութիւն», որ ոչ չափ ունի եւ ոչ սահման, ոչ օրէնք գիտէ եւ ոչ կանոն, որ հրաջքներ կըգործէ եւ ընդունակ է աշխարհի ամեն անկիւններէն բառեր մուրալ նոցանով լուսաբանել հայի անունն ու ծագումը, լուծել նորա լեզուի դաղտնիքն եւ զրել Վիննական պատմութիւն հայոց»:

Սակայն մենք դառնանք մեր խնդրի շարունակութեան, ըստ Գարագաշի.

«Հայք Արմին անուամբ կը յիշուին իբր Եօթներորդ նահանգ արեւմտեան ի կարգս հարկատու աղգաց զանդիկ կրօնիւք»: (Հ. Ա. 66):

«Թէ հայք պարսից ժամանակ զանդիկ կրօնքն ունէին՝ յայտնի է նաեւ Պերսեպոլիսի սեպագիր արձանագրութիւններէն... ուր հայք զանդիկ կրօնք ունեցող աղգաց կարգը կը յիշուին»: (Անդ. 270):

Ընթերցողն երկար չգրադեցնելու համար այլ եւ այլ խօսքերով մէջ կը բերենք արձանագրութեան բնագրէն այն բոլոր հատածները, որով Դարեհ կըթուէ իւր հարկատու նահանգները. եւ կըհրաւիրենք զընթերցողն անդ գտնել այն, ինչ որ Գարագաշ. կը նշանակէ վերեւ մէջ բերուած խօսքերով.

ա) Բեհիստանի (Behistan). արձանագրութիւն էջ 4, տող 14—17.—«Uvaja, Babirus, Athura, Arabaya, Mudraya,— ժով եգերայք. Sparda, Yanna, Mada, Armina, katapatuka, Parthava, Zarank»... որ է. Սուսիանա, Բաբելոն, Ասորեստան, Արաբիա, Եգիպտոս, Սպարդա, Յոյնք (Յոնեացիք), Մարք, Արմենա, Կապադովկեա, Պարթեւեա, Զարանկա...:

բ. Պերսեպոլիս—էջ 38, տող 9—18.—

Սոքա են իսկ բաժ բերող նահանգներու Uvasa, mada, Babirus Arabaya, Athura, Mudraya, Armina, Katapatuka, Sparda, yanna, որի ի ցամաքի և որ ի կղզիս և յարեկս կոյս, Asagarta, Parthava, Zaranka...»

գ. Պերսեպոլիս, էջ 54. տող 30.

Սոքա են այն երկրներն, որոնք ինձ կը հնազանդին,

բաժ կրքերեն և իմ հրամանները կրկատարեն—Mada, Uvaja, Parthava, Haraika, Bakhtiris (արեւելեան բոլոր նահանգներն...) Babirus, Athura, Arabaya, Mudraya, Armina, Kata-patuka, Sparda, Yanna, Saka...»

(Տես Fr. Spiegel 2 Auf.)

Այս հատուածներէն կերկի, թէ Դարեհ իւր նուաճած երկրներն թուելու ժամանակ առաւել տեղական մերձաւորութիւն քան ուրիշ մի այլ բան ունի իբր սկզբունք: Ձի այլապէս մտածելու համար, պէտք է ընդունել, թէ Ասորեստան, Նոբիլիտոս, Կապադովկիա, Սպարդա և այլն որոնց մէջն է Արմ նախ, նոյնպէս զրադաշտական կրօնն ունէին, որ անհեթեթութիւն է:

Մի թիւրիմացութեան տեղի չտալու համար՝ հարկ կը համարինք աստէն յիշել, թէ մենք չենք վիճեր հայերու զրադաշտական կրօնն ունենալու կամ չունենալու դէմ. հայք էին զրադաշտեան, թէ ոչ. առ այժմ մեզ համար նշանակութիւն չունի. մեր նպատակն է ցոյց տալ ընթերցողին, թէ «Քննական պատմութիւն» մ' գրող ինչպիսի փաստերով կը հաստատէ իւր ասածներն, ինչպէս է ուսումնասիրել իւր նիւթն և որչափ ձեռքն հաս է գրել մի նոր պատմութիւն դարերով գրեթէ ազգովին վաւերացեալ պատմութիւնը արկանել ընդ քննութեամբ և այս արդեամբ ոչ փոքր համարձակութիւն էր. իսկ այս մեծ «գործն ուղղեալ է ազգին լուսաւորեալ մասին, այն մասին, որ իննետասներորդ դարուն քննադատական ոգին, և կամէր վաղուց տեսանել այն ոգին մուծեալ և յազգային պատմութիւն մեր (ինչ հրապուրիչ խօսքեր). ազգին այս մասին համար հին բարի ժամանակ արդէն անցած է»: (Էջ 202):

Եւ մենք դժբաղդաբար ստիպուած ենք աւելացնել, թէ Դարագաշ. իւր «Քննական պատմութեամբ» անվիճելի կերպով կը հաստատէ, որ բարի ժամանակներուն յաջորդող իսկ գիտական քննական ոգին դեռ չափ հեռու կը գտնուի մեր պատմութեան սահմաններէն:

Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՏԴԻՐՆԵՐ.

«Քննական պատմութեան» մէջ գտնուած բոլոր լեզուաբանական կէտերն քննած լինելու համար՝ ստուգաբանական մասի վերայ պէտք յաւելուլ և հետեւեալն, որ թէպէտ Դարագաշ. պատմութեան համար այնքան էական չեն, բայց մեր նիւթի ամբողջութեան նկատմամբ կարևոր քննութեան:

«Քննական իրաց ձայներու նմանութենէն առնելով իւր ծնունդը՝ լեզուն հասած է այն այլ և այլ հասակներուն, զորս լեզուաբանութիւնը կը գտնէ յայլապէս տեսակ լեզու... բայց լեզուաց քննութիւնը ոչ միայն զկենսաբանութիւն նոցա, այսինքն զեղանակ ծագման և զարգացման նոցա կը ցուցնէ մեզ, այլ և մարդկային ազգին աշխարհագրական և ցեղային բաժանման վրայ կը յայտնէ կարևոր իրեր, այսինքն թէ մարդկային

ազգը կըրաժանուի այլ և այլ ընտանիք կամ բուն, և թէ իւրաքանչիւր բուն իւր ճիւղերովն ունի իւր յատուկ գետինը երկրիս վերայ, այնպէս որ լեզուի մը լեզուաց որ բունին վերաբերելը գիտնալով՝ կրնանք առանց վարանելու ասել (?), թէ այն լեզուն խօսող ժողովուրդը մարդկային որ բունին կը վերաբերի և աշխարհագրապէս երկրիս որ կողմը կը բնակի: (Հ. Ա. 138): Այս հատուածէն կըհետեւի, թէ Գարագաշ.

ա) Բնական ծայնեբուն նմանութենէն կը համարի լեզուի ծագումը, ուրեմն այն տեսութիւնը, որ լեզուաբանութեան մէջ յայտնի է բնածայն (onomatopoeie) կամ ըստ Մ. Միւլլերի՝ wauwau.

բ) Մարդկային ցիղը կը բաժանուի զանազան բունի ըստ լեզուներու ազգակցութեան և այս առանց վարանելու.

Լեզուի ծագումը մեկնելու համար ժամանակին դոյութիւն է ունեցիկ երեք տեսութիւն.

1) Բնածայնի տեսութիւն, զոր Մ. Միւլլեր կ'անուանէ վաու-վաու (wau wau Theorie).

2) Զայնարկութիւն կամ քայքայանք (interjektional կամ exclamatorisch) զոր նոյն գիտուն կը կոչէ. պահ-պահ (pah-pah Theorie).

3) Կլինգ-կլինգ (kling-klang Theorie), զոր Մ. Միւլլեր նախապէս առաջարկած և ապա իրմէն և ուրիշներէ մերժուած է:

Սոյն երեք տեսութիւնն ևս հաւասարապէս հնացած լինելով՝ աւելորդ կըհամարինք այս մասին խօսիլ մանաւանդ զի մեր ծրագրէն դուրս է: Միայն Գարագաշ. ընդունած տեսութեան նկատմամբ բաւական է Մ. Միւլլերի հետեւի խօսքը.

«Զարմանալով կը դիտէի, երբ դասախօսութեան սկսայ (1861 թ.), թէ այսպէս կոչուած բնածայնի տեսութիւնը դեռ մեր օրով մի քանի՝ թէպէտ սակաւ՝ կարի յամառ պաշտպաններ կը թուէր: Եւ եթէ իսկապէս այս տեսութիւն իւր բուն ձևովն այլ ևս չի կարող կողմնակիցներ գտնել, սակայն և այնպէս փոքր ինչ կերպարանափոխուած կը յեղյեղուի վերստին»:

(Վերև յիշած երկի յառաջաբ. VI էջ):

«Լեզուն» ըստ նոյն գիտնականի՝ արմատներով կըսկսի և թէ այս արմատներն ոչ այլ ինչ են՝ բայց եթէ ձայնական նշանակներ (lautliche Typen), կամ նշանական հնչիւններ (typisch Klänge): Իսկ ինչ որ աստի արտաքոյ է, չէ այլ ևս լեզու կամ, պատմականօրէն արտայայտած, դեռ ևս չէ լեզու, որչափ և վերջինս հետաքրքիր լինի հոգեբանութեան ուսումնասիրութեան համար: (Նոյն երկ. I. 503) Այս արմատական նշանական հնչիւններ արտաքերող շարժառիթը կըպարզէ հոգեբանօրէն մի այլ՝ նոյնքան յարգ վայելող գիտուն Հ. Պաւլ (H. Paul) իւր մի երկի *) մէջ.

*) Hermann Paul, Principien der Sprachgeschichte. 2 Aufl. 1886.

Նախաստեղծ հնչիւնը, կը գրէ, ոչ այլ ինչ է՝ բայց եթէ անդրադարձ շարժումն (reflexbewegung): Ընդհանրապէս մտածելու ենք, մարդկային բարբառն իւր սկզբէն նշանացի լեզուի միջոցաւ զարգացաւ և թէ իրեն եղած այս նպատակն հետզհետէ աւելորդ է համարուել, որչափ լեզուն աստիճանաբար առաւել կատարելագործուել է: Այս նշանացի լեզուն՝ բնականաբար այնպէս ակամայ անդրադարձ շարժումներէն առած պիտի լինի իւր սկիզբն... Վայրկենական պիտոյքն է, որ յառաջ կը բերէ մի նոր հնչախումբ: Սակայն թէ այսպիսի հնչախումբ մի իւր առաջին ստեղծումէն յետոյ կոչնչանայ, թէ մի մնայուն ազդեցութիւն կը թողու յետսամնայ, այս կախուած է իւր որպիսութենէն և այլ պատահական հանգամանքներէ:

Այն ինչ որ նախաստեղծ կը կոչենք՝ ըստ ինքեան դեռ բաւական չէ լեզու կազմել: Անհրաժեշտ է, որ յիշողութիւն ևս համապատասխան կերպով գործէ՝ պահպանելով այն ընկերութեան պատկանող անհատներէն ստեղծուածը: Զիտ անտի կսկսի լեզուն, ուր խօսելն ու հասկանալը հաստատուած են վերարտադրութեան վերայ: (Եջ 144)

1) Յեղերու ըստ լիզոյի բաժանելու տեսութիւնը նոյնպէս հետեցած է լեզուագիտութեան համար և վաղուց հնաւիճառներու բաժին դարձած: Լեզուի ընդհանուր նախածագման խնդիրն՝ ըստ Մ. Միւլլերի, մարդկութեան ընդհանուր հարցի հետ բնաւ չի գտնուիր յանհրաժեշտ կապակցութեան: Եթէ ապացուցուէր իսկ, թէ մարդկութեան բոլոր լեզուներն մատնանիչ կը լինին մի ընդհանուր աղբիւրի վերայ, և այն ժամանակ աստի չպիտի հետուէր, թէ և՛ մարդկային ազգն մի գոյգէ պիտի սերէր. զի գոյութիւն ունին գէպքեր, իբր մի շնորհալի ազգի սեպհակաւութիւն եղած լեզուն՝ այլ ցեղերու է հաղորդուած միայն պատմութեան ընթացքին, Յեղերու դասաւորումն և լեզուներուն պէտք է բոլորովին անկախ լինէին իրարմէ: Յեղերն կարող են իրենց լեզուն փոխել և պատմութիւնն կը ներկայէ զանազան օրինակներ, իբր մի ցեղ ընդունել, իւրացուցել է մի ուրիշի լեզուն: Ուստի տարբեր լեզուներ կարող են մի եւ նոյն ցեղէ եւ նոյն լեզուն կարող է այլ եւ այլ ցեղերէ խօսուիլ. այսպէս ցեղերու և լեզուներու դասաւորումն ի միասին բերելու ամեն փորձ անհրաժեշտաբար պէտք է վրիպի իւր նպատակէն: (Անդ. Ա. 434):

Շատ օրինակներու հետ և Ռումանական կոչուած լեզուներու պատմութիւնը փայլուն ապացոյց կը հանդիսանայ այս տեսութեան:

Վերջացնելով այս յօդուածը հարկաւոր կը համարինք նշելատել, որ ոչ միայն մեզ կարելի չեղաւ այս լեզուաբանական բանադատութիւնն ընդարձակել և միւս՝ պատմական մատենա-

գրական և այլն մասերու վերայ, այլ և ժամանակի սղուծեան պատճառով չկարողացանք յիշել և այն բոլոր պատմական դէպքերն, զոր Գարազաշեան կապած է իւր «ճարտարած բռնադրօս և պիտակ ստուգաբանութեանց հետ»։ Այս համեմատութիւնը կը թողունք հայ ընթերցողին և յոյս ունինք, որ շատերն այս համեմատութեան միջոցով՝ պարզ կերպով պիտի տեսնեն, թէ ինչ արժէք ունի այս ճշուրջ գործն, որ կը կրէ «Քննական պատմութիւն հայոց» ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական և բանասիրական տեղեկութեանց» մեծահնչիւն վերնագիրն։ Շատ ցաւալի է տեսնել, զի Գարազաշեան ԺԹ դարու վերջին գրելով իւր «Քննական պատմութիւն», բոլորովին անտեսեր է իւր յիշած գիտութեանց լուրջ և գիտական ուսումնասիրութեանց արդիւնքը և նստեր նոր առասպելներ կը կարկատէ և դայն իբր եզրակացութիւն ժամանակակից գիտութեան՝ հայ ընթերցողներուն կը ծախէ. առաւել ցաւալի է մանաւանդ, երբ հեղինակն է Գարազաշեան էֆէնտու նման յայտնի մի գրագէտ։

Լեզուաբանական սոյն նկատողութիւնները սկսեր էի գրել, երբ գիտաւորութիւնս յայտնեցի պատուական բարեկամս՝ ուսուցչապետ Ն. Մտին, որ իւր համաձայնութիւնը կը յափռէ հետեւեալ խօսքերով, զոր հայ բանասէրներու ուշադրութեան կը յանձնեմ. «Գարազաշի լեզուաբանական խնդրանութիւնները հարկաւոր է պարզել հայոց հասարակութեան առաջ մանրամասն և լաւ կանէք, եթէ յանձն առնէք այդ բան... Ոչ հայերէն թերթի մէջ գրել Գարազաշի լեզուաբանական սխալագործութիւններու մասին չարժէ»։ Իրաւամբ կը նկատէ մեր գիտական բարեկամը, թէ չարժէ այս սխալագործութիւններն պարզել օտար թերթերու մէջ. գիտական այս սխալագործական տխուր երևութի նկատմամբ միակ միտքարական կէտն այն է, որ Ներսիսյանի հայագէտներ կամ միջոց չունին կամ բնաւ չեն կարգար մեր հաստատիր «Ստուգաբանական բառարաններն» և «Քննական պատմութիւնները», որոնցով լուսաւորեալ աշխարհի առաջն ոչ այլ պիտի շահէինք, բայց եթէ ցուցնել մեր խորին տգիտութիւն լեզուաբանութեան մէջ. (տես Քննական պատմութիւն հ. Ա. 125)։ Առ այժմ այսչափ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱԶԱՏՐԵԱՆԾ.

1895 թ/հ

Ստրազբուրգ։

Ձեռք, պահլաւ և սանսկրիտ լեզուների բառերի մէջ S եւ Z տառերը գլխին փուշ պիտի ունենային, իսկ & տառը վերեւից մի հորիզոնական քիծ. ցաւում ենք, որ քաղաքիս տըպարաններում այդ նշանները չգտնուելու պատճառով տպուեցան առանց փշի եւ գծի։